

Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀՈՏԵՐԻ ԱՀԱԲԵԿԻԶԸ



891995  
Գ-13

ՊԵՏՏՐԱՍ Օ 1936 Օ ՅԵՐԵՎԱՆ

891.995

Գ-13

ԱՐ.

Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

# ՀՈՏԵՐԻ ԱՀԱԲԵԿԻԶԸ

ԶՐՈՒՅԱ ԱԴՅՈՒԹԻ ՑԱՍԻՆ

ԽԱԿԱՐԵՎ Վ. ՇԽՈՒՅԵՎԻ


ՏՀ  
ՏՀ

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԵՐԱՎԱՆ

Խմբագրեց Հ. Պետրոսյան  
Տեխ. Խմբ -  
Սրբագրիչ Հ. Դոլուխանյան

3

Գետհատի տպարտն  
Դեմիլիակ Ելաղթ վ. 254,  
Դուռը 1371, Հրատ. 3572, Տիբուդ 4000



Լայնատարած ավազոտ անապատը փոված եր արևի այրող ճառագայթների տակ: Հորիզոնը ծածկվել եր ինչ-վոր դորշ ավազոտ մշուշով: Անապատը նման եր ծովի՝ կարմրագեղնավուն անհանդիստ ծովի: Լուս եր չորս կողմը. վոչ մի կյանք. յերբեմն միայն, այս կամ այն տեղից դուրս եր ցցվում ստորերկրյա բնակիչ-ջատը, մողեսը կամ մի ուրիշ կենդանի. արեկ այրող ճառագայթներից, հեղձուցիչ ողից խուսափելով՝ նորից ներս ելին քաշվում, թագնվում ստորերկրյա բնակարանում:

Անեղք անապատը յերբեմն կենդանություն եր առնում, յերբ պատահաբար տափաստանից ավագների մեջ եր ընկնում առյուծի ճիրաններից հազիվ ազատված ջայլամը կամ անտիւռպը (այծյամը):

Մի անդամ, յերբ անապատում սովորական լոռով յուն  
եր տիրում, հորիզոնի վրա ինչ-վոր գորշ բան յերեսոց,  
կապտավուն յերկնքի Փոնի վրա հայտնվեց մի կետ,  
վոր քանի գնում՝ աճում, մեծանում եր և մոտենում:  
կետը դարձավ յերկար շարժուն գորշ գիծ, վորը ոճաճէ  
ձգվում եր առաջ: Մեռելային լոռությունը հանկարծ  
խանդարվեց հեռվից հնչող զանդուլակների միաւոր  
յերդով: Անապատն աշխուժացավ:

Դիմ'նգը... դիմուը... դւա՛նդը... դիմ'նք...  
դւա՛նդ... Ավելի ուժեղ և ուժեղ եյին հնչում այդ  
հնչունները՝ կենդանություն տալով անապատին:

Հեռվում յերեւաց քարավանը: Անապատի նավերն  
եյին— ուղտերը բեռնավորված, հեծյալները մեջքնե-  
րին՝ քայլում եյին հանդիսատ և համաչափ քայլերով,  
առանց շտապելու, հպարտ ու վեհանձն: Անապատը չեք  
վախեցնում այդ տոկուն, անվրդով, դիմացկուն կեն-  
դանիներին: Առանց ջրի ու սննդի նրանք որերով կա-  
րող են դիմանալ:

Ուղտերը չեյին արտնջում. համբերությամբ կրում  
եյին մեջքի վրա բարձած ծանրությունը, դիմանում  
յերկար ճանապարհորդության. նրանք վարժվել եյին  
դրան: Նրանց վրա նստած եյին, ուղտից վոչ պակաս  
սպանասիրու, անվրդով՝ արար-վաճառականները:

Բացի արարներից կային և մի քանի յեվրոպացի-  
ներ: Սրանց ուղտերն ել ծանրաբեռնված լեյին. բացի  
մանդամթերքից նրանք վերցրել եյին իրենց հետ ծա-  
րովի վրաններ, կոլեկցիանների համար արկղներ, ան-  
ծիքներ:

Չորս յեվրոպացիներից յերկուսն անդիմացիներ ե-  
յին, յերկուսը՝ ուռւներ: Բոլորի գլխին ել անդիմական  
դլխարկ եր, վոր կարող եր լավ պաշտպանել գլուխն  
արեկի ճառագայթներից:

Կայտառ արարական ձի հեծած, քարավանի առջե  
սրընթաց այս ու այն կողմ եր ուղղում իր նժույզը  
սեահեր բեղուինը՝ անապատի մշտական բնակիչը:



Նա քարավանի ուղեկիցն եր: Ամեն մի շամփիդ, ավաղ-  
ներով ծածկված, ամեն մի քողարկված ճանապարհ, ծա-  
նոթ եր նրան. Նա քարավանը տանում եր այնպիսի  
ճանապարհներով, վոր միջավայրին անծանոթ մարդը  
վոչինչ չեր կարող տեսնել. բեղուինը կարծես զգում  
եր ուղղությունը՝ և չեր սխալվում: Կայտառ նժույզը  
խաղացնելով՝ նա ոլանում եր առաջ, յերբեմն մի վայր-  
կյան կանգ առնում, սրատես աչքերով լավ հետազո-  
տում շրջապատը, ավաղուտները, վորոնում իսկական  
ուղին կամ հանդատյան հարմար մի վայր, ուղիս:

Յեկ քարավանը հետ չեր մնում. ուղտերը համա-  
չափ քայլում եյին առաջ, բեղուինի բռնած ուղղու-  
թյամբ, բայց սպասած ոազիսը չկար ու չկար: Ճամ-  
բորդներն արդեն սկսում եյին անհանդատունայ, դժուհել  
և հուղգրամ եյին անհամբերությունից: Նրանք շատ ե-  
յին վախենում հանկարծ անապատի սոսկալի քամու-  
սամումի գոհը դառնալուց:

Հանկարծ կանգ առաջ առաջնորդ բեղուինը. նրա  
սրատես աչքերը կարծես հեռվում մի բան նկատեցին.  
Նրա ձին ասես ավելի աշխուժացավ: Բեղուինը շտա-  
պեց դեպի քարավանը, մոտեցավ ճանապարհորդներից  
մեկին և ասաց արարերեն:

— Միստր Թոմասը թող դոհ լինի: Ուղեկիցդ ճիշտ

Ճանապարհի վրա յե, այս ավագները շատ լավ ծանոթ են: Շուտով անապատը կփայլի կանաչներով, իհարկե կենարար ջուրն ել կղովացնի մեր տանջված մարմին-ները: Ուզիսից այն կողմը յերկար չե անապատը. կանցնենք տափաստանով, ապա... հեռու չենք լինի նաև սրբազն նեղոսից:

Միստր Թոռմասն իր կյանքում շատ եր ճանապար- հորդել: Քիչ չեր յեղել Աֆրիկայում, բայց անապա- տային այս մասում առաջին անգամն եր լինում: Նա շատ բան եր լսել բեղուինների մասին, հանդիպումներ եր ունեցել նրանց հետ, սակայն այնքան ել լավ տպա- վորություններ չեր ստացել: Զնայած վրան, քարափա- նի առաջնորդ ընտրելիս՝ նա կանդ առավ Սելիմի վրա. լսել եր նրա մասին՝ վորպես լավ առաջնորդի:

Առայժմ Սելիմը բարեխիղձ եր, վոչ մի կառկած հ առիթ չեր տալիս: Այնուամենայնիվ Միստր Թոռմասն սուզեց ստուգել Սելիմին և զգուշությամբ դիմեց ըն- կերոջը.

— Իվան Պետրովիչ, նայեցեք ինդրեմ, ի՞նչ են ասում կողմնացույցն ու քարտեղը: Դուք հետեւմ եք մեր աշխարհագրական դրության, մեր ընթացքին: Տե գիտե՞ք՝ վորտեղ ենք այժմ: Սելիմն ասում ե, թե շուտով ուղիսին պիտի հասնենք, և այդ կլինի վեր ուղիսիս պատճեն առաջ մի քիչ անապատ, մի քիչ տափա- ջին ուղիսոր. ապա մի քիչ անապատ, մի քիչ տափա- տան, և մեր առջև կլինի նեղոսը: Ի՞նչ ե ձեր կար- ծիքը:

Իվան Պետրովիչը մինչ այդ բաղմած եր ուղտի վրո- ւ իր դիտողություններն եր գրանցում: Նա Սե- և իր դիտողություններն եր գրանցում: Նա ՍԵ

— Միստր Թոռմաս, Սելիմը չի սխալվում: Տասը կիլոմետր դեպի հարավ-արևելք, հենց միշտ մեր բռնած ուղղություններին. նրա աչքերը կարծես պառաւ ելին. «Յես քո դու ծիքներից լավ գիտեմ» ի՞նչ կա և ի՞նչ չկա այս անապատում»: Բեղուինը բան չասաց, յերբ միստր Թոռմասը հաղորդեց նրան իվան Պետրովիչի դիտողությունների արդյունքները. նա անմիջապես մտրակեց ձիուն ու շտապեց առաջ. ձին արագացրեց ընթացքը. նա զգում եր, վոր կերն ու չուրը մոտիկ են. խաղում եր մերթ հանգիստ, մերթ վազում կատաղի, բարձրանում յետերի վրա:

Ուղտերն ել ավելի զգաստացան. սկսեցին ավելի ա- շառ քայլել. բոլորն ել գովարար ուղիսը մոտ զգալում շտապում ելին:

## ՏՈՒԱՐԵԳՆԵՐ

Բայց մի անակնկալ դեպք քիչ մնաց բոլորովին խանդարեր հանգստությունը:

Քարավանը դանդաղ շարժվում եր հարթ անապա- տով: Հեռվում յերեացին անապատի բարձունքները, այսպես կոչված՝ խամադները՝ տափակ և հարթ գա- զաթներով. խամադների չորեղոնը վորոշ տե- ղերում ճամբորդների աչքերից ծածկվեց:

Խամադներից մի քանիսը քարավանի յետեն ելին մնացել, յերբ ուղտերն անսովոր շարժումներով ճամ- բորդների ուշադրությունը գրավեցին: Ուղտավար- ներն անմիջապես կանգնեցրին ուղտերը, հալաքվեցին մի տեղ, սարսափած դեմքերով խորհրդակցում ելին: Նրանցից մի քանիսը քարձրացան ուղտերի վրա, վոր- պեսզի ավելի հեռու նայեն:

Քարսավանին վտանգ եր սպառնում, բոլորն ել զդում  
եյին այդ: Հրացան վերցնելով՝ ամեն մեկն իր համար  
հարմար դիրք եր վորոնում: Վորոշեցին առաջ չդնալ,  
մինչև լավ չստուգեն սպառնացող վտանգը: Շատ եյին  
խանգարում խամադները: Յեվրոպացիները հրացան-  
ները պահում եյին պատրաստ: Միստր թոմասը, բա-  
ցի հրացանից, ուներ նաև յերկու ատրճանակ: Նա իր  
ուղտն անվախ քշեց առաջ, մյուս յեվրոպացիներն ել  
հետեւցին նրան:

Սելիմը, վոր առաջ եր վազել ուղտերի անհանգըս-  
տության պատճառն ստուգելու համար, շուտով վե-  
րադարձավ, մի քանի բան ասաց ուղտավարներին.  
ապա մոտեցավ միստր թոմասին: Աներկյուղ յեղանա-  
կով նա հաղորդեց.

— Թող միստր թոմասն այնքան ել չանհանգստա-  
նա. թեև նրանք են, բայց մենք շատվոր ենք:


— Ովքե՞ր են, — զարմացած հարցրեց միստր թո-  
մասը:

— Իհարկե, տուարեգները — անապատի ավազակ-  
ները: Նրանց հայտնվելը բարի բան չի դուշակում.  
կամ մեզ պիտի վնասեն, կամ մենք լավ դաս կտանք  
մաս մուք լավ հրացաններ ունեք, տվե՞ք մի քանիսը  
մերոնց: Միստր թոմասը զգալով վտանգի լրջու-  
թունը, անմիջապես յերկու հրացան տվեց Սելիմին:

Թշնամին վազուց եր նկատել քարավանը և հետա-  
պնդում եր. ինչպես յերեսում ե՝ շտապում եյին հա-  
նեն քարավանին նախ քան նրա ոսպիս մտնելը:

Ուղտերը մոտ զգալով թշնամուն՝ այս ու այն կողմ  
ընկան, հաջողվեց բոլորին մի տեղ հավաքել և զսպել:  
Զինվածներն առաջ անցան, առաջին շարքում եյին  
միստր թոմասը, իվան Պետրովիչը:

Վերջապես խամադների յետելից, անապատի ա-  
վելութեացին վրա յերեացին հեծյալները: Բոլորն ել ուղ-  
տագների վրա յերեացին հեծյալները: Չորս հոգի եյին, յերկուսն սոլիտակ  
ուղտերի վրա:



Ուղտերն արագ վազում եյին զեղի քարավանը:  
Այժմ ճամբորդները բոլորը հասկացան, վոր անկոչ  
հյուրերը տուարեգներն եյին: Մի ձեռին վահանն եր,  
մյուս ձեռին նիզակին՝ առաջ ուղղած, ուսին ել կայծ-  
քարի հրացան: Այսպես զինված՝ սկզբում նրանք շատ  
համարձակ և արագ ուղղեցին իրենց ուղտերը զեղի  
քարավանը, բայց հաղիվ մոտենալով՝ տեսան հրա-  
ցանները պատրաստ ճամբորդներին և նրանց մեջ՝ մի  
քանի համարձակ յեվրոպացիներ. կանգ առան, ուղ-  
տերը յետ-յետ քաշեցին: Զելին սպասում, վոր կհան-  
դիպեն լավ զինված մարդկանց: Միստր թոմասի ան-  
վախ ու համառ հայացքը մեզմացրեց տուարեգների  
սպամական վոգենորությունը: Հակառակորդները լուս  
նայում եյին իրար, վոտից գլուխ չափում, վոչ վոք  
չեր ուսում առաջինը հարձակվել:

Առաջնորդ տուարեգը նիզակին իջեցրեց, ձեռքը տա-  
րավ ճակատին և ի նշան վողջույնի ու հարդահքի՝  
գլուխը խոնարհեց: Խաղաղության նշան եր: Միստր  
թոմասն ու մյուս զինվածներն ել հրացաններն իջեց-  
րին: Տուարեգը մոտենալով միստր թոմասին՝ տվեց  
նրան ինչ-որ չոր բույսերի փունջ և իր լեզվով վողջու-  
նեց յեվրոպացուն: Միստր թոմասն ել սիրավիր խոսքեր  
առաջ նրան, նույնիսկ արարերեն վողջունեղ: Տուարե-  
գը լսելով արարական ծանոթ խոսքերը՝ ամելի ևս մեղ-

մացավ։ Տուարեզները բարեկամաբար վողջունեցին Սելիմին, դրուցում ելին նրա հետ, ըստ յերեռոյթին Հարց ու փորձ ելին անում յելրոպացիների քարավանի մասին։ Միստր Թոմասը տուարեզներին հարցրեց մոտակա ուղիսների մասին։ Նրանց ցուցումները ճշտում ելին իվան Պետրովիչի դիտողություններն ու Սելիմի ասածները։

Տուարեզները զբոյցի բոնված՝ մի քիչ ուղեկցեցին քարավանին։ Թեև նրանց ընկերությունն այնքան ել ցանկալի չեր, բայց միստր Թոմասը վոչ մի դժգություն չհայտնելով հանդերձ՝ գրպանում պատրաստ պահում եր ատրճանակը։ Ո՞վ գիտե, ամեն ինչ կարու եր պատահել։ Տուարեզներին դժվար եր հավատալ, նրանք ամեն ըոպե խաղաղ հյուրերից կարող ելին անժիշտակես կատաղի ավաղակների փոխվել։ Բայց անվախ տուարեզը հարզել գիտե քաջությունը, մի գուցեայդ եր պատճառը, վոր այս անդամ նրանք չեղվեցին իրենց խևական նպատակից։ Քարավանում վաճառականներ չկային. հարձակումը նյութական արդյունք չեր տա։ Քարավանը շարժվեց առաջ։ Տուարեզները գնում ելին Սելիմի հետ։ Միստր Թոմասը հեռու չեր նրանցից, ուստի և կարող եր հանդիսատ և մանրամասն դիտել նրանց, մանավանդ առաջնորդ տուարեզին։ Տուարեզը վրան դցած ուներ կարմիր ծածկոց, ճակատի մի մասը, բերանը մինչեւ քիթը, նույնիսկ քիթի ծածկված եր ու շրով։ Գլխին փաթաթած ծածկը ծածկված ելին ուսերին։ Աջ ձեռքին անց եր կացրած քարե ողակ. այդ թե զարդ եր և թե մանավանդ ձեռքը պաշտպանելու միջոց— թրի հարվածի դիմաց։ Զախ թեկի վրա կախված եր դաշույնը, գոտուց թուրը։

Բայց տուարեզը հաջար ու մի սոսկալի փորձանք ների դիմաց վորքան համարձակ եր ու անվախ, այն չափ յերկյուղ եր զգում բնության անհասականալի յերեռոյթների հանդեպ, գերբնական «բարի ու չափ վորիների» ուժը նրա վրա ափելի եր աղում, քան թշնամու սրածայր մահաբեր թուրն ու նիզակը։ Կըրծքին, զգին կախված ելին բազմաթիվ թալիսմաններ։

Միստր Թոմասի աչքն ընկալ տուարեզի կոչիկ ներին. նրանք կարված ելին ուղտի կաշվից և լավ նստած ելին վոտքերին։ Իվան Պետրովիչին ամենից շատ դուր յեկան սպիտակագույն «մեզարի» ուղտերը։ Սովորական ուղտերից ավելի նրբակազմ, գեղեցիկ և ավելի բաց գույնի ելին, իսկ հեռվից համարյա սպիտակ ելին յերեռում։ Մեզարի ուղտերը— տուարեզների սիրած ուղտերն են։ Նա իսկույն զգաց, թե վո՞րքան լավ վազող ուղտեր պիտի լինեն նրանք, յեթե նրանց հեծյալները տուարեզներն են։

Տուարեզները մերժեցին միստր Թոմասի առաջարկը՝ միստրին զնալ գեպի ուղիսը։ Հրաժեշտի վողջույն տալով՝ շուտով բաժանվեցին և ուղտերը սրբնաց քշելով՝ յետ զնացին ու կարճ ժամանակամիջուցում անհետացան խամազների յետևում։ Փոշու ամայն եր միայն ցույց տալիս, թե վոր կողմ անհետացան տուարեզները։

Իվան Պետրովիչի հաշիվները և Սելիմի ցուցումները շուտով ճշտվեցին։ Անցան մի քանի կիլոմետր ել հորիզոնի վրա, անմիջապես ավազների մեջ, մի ու զիծ նկատվեց, վորը քանի զնում լայնանում եր։ Կառկած չկարողացի եր։

Բոլորն ել միստրին զգացին կանաչների զովը, ջրերի քաղցրությունը։ Մարդկանց զըույցներն աշխուժացան, ուղտերը բերաններն անձոռնի ծուելով լալկան ձայնով յերկարատև հառաչեցին. նրանց զանգուլակներն ավելի հնչուն ձայներով յերգեցին...

Անցան զլիսարկը միստր Թոմասին քիչ եր ողնում. արեն ուժեղ եր այրում։ Յերեք ընկերների մասին հո՛ խոսել չարժեր. քրտինքն առատ առվակի պես հոսում եր յերեսներից, զգեստները բոլորովին թրջվել ելին, կոկորդները չորացել։ Զրի պարկերը վազուց ելին դատարկված։

Վորքան մոտենում ելին ուղիսին, այնքան ավելի ելին շտապում։ Մեղմանում, թուրանում եր տոթը, հեռվից արդեն դդացվում եր կանաչների բուրմունքը, թարմ, զրի զովությունը։

## ՈԱԶԻՍՈՒՄ

Ահա և ուզգիսը. կարծես ձեռքի ափէ վրա լինեք,  
այնքան պարզ յերկում եր նա իր ամբողջությամբ:  
Նրակաղմ արմավենիները ճոճվելով կարծես վողջու-  
նում եյին հոգնած ճամբորդների դալուստը: Շնորհ  
Հաջոցից յերկաց, վոր ուզգիսում, բայց կենսարար  
ջրից, թարմ կանաչներից, արմավենու քաղցր պտուդ-  
ներից, նրանց սպասում եյին և մարդիկ՝ ուզիսների  
բնակիչները:

Ուզգիսը մեծ եր: Կիսալեր, հնացած քարե տնակէ-  
ների, խարխուլ խրճիթների շուրջը շարժած եյին  
հսկայական արմավենիներ: Հազիվ քարավանը մտավ  
արմավենիների զով ծառուղին, հանկարծ չորս կողմից  
նրանց վրա հարձակվեցին հովիվների կատաղի շները,  
կտրեցին քարավանի ճանապարհը: Ուղտերն անուշար-  
դիր, անվրդով և վստահ քայլերով շարունակում եյին  
առաջ զնալ. նրանց հեծյարները թեև շատ բարձր եյին  
կատաղի գամփոներից, բայց այս ու այն կողմ եյին  
նայում, աչքերով հետեւում շներին, չլինի թե նրանցից  
մեկն ու մեկը թռչի նրանց վրա: Իջնելու մասին հո-  
չեյին մտածում, ըստ յերեսութիւն դեռ վաղ եր:

Սպասում եյին Սելիմի նշանին: Շներն ավելի զայ-  
րացկու և կատաղի հաջոցով հետապնդում եյին  
րացկու վերջապես հասան աղբյուրին: Այդտեղ յերե-  
նրանց: Վերջապես հասան աղբյուրին: Այդտեղ յերե-  
նրանց վացին խաշնարած բնակիչները. այս ու այն  
կողմից դուրս թափվեցին տարբեր հասակի մերկ ու  
կողմից դուրս թափվեցին տարբեր հասակի մերկ ու  
սեացած յերեխաներ, և նրանց աղաղակները միացան  
սեացած յերեխաներ, և նրանց աղաղակները միացան  
ու ևս հետապնդող շների հաջոցին: Ուզգիսն աղմկեց:  
Մի քանի մարդիկ անմիջապես վրա հասան՝ շներին  
սաստելու. վճռական աղաղակները բավական եյին,  
վոր շները հանկարծ լուն: Քարավանը դիմավորողնե-  
րը հովիվներ եյին: Գլուխները խոնարհելով՝ վողջու-  
նեցին ճամբորդներին:

Բեղուին Սելիմը, ինչպես յերեսում եր, նրանց  
վաղուցվա ծանոթն եր, հովիվները ջերմ դիմավորե-

ցին նրան. Սելիմն ել այնպես եր պահում իրեն, կար-  
ծես նրանց մտերիմ բարեկամը լիներ:

Մինչ քարավանը վրաններ եր խփում, Սելիմը  
դնաց հովիվների բնակավայրը:

\*\*\*

Ուզգիսը հարուստ եր բուսականությամբ. նրա զով  
ստվերում մի քանի քարավան կարող եր պատրա-  
պարզել: Գետնից դուրս եր ժայթքում սառնորակ աղ-  
րյուրը, ողի մեջ արդեն զգացվում եր նրա թարմու-  
թյունը: Աղբյուրից վոչ այնքան հեռու՝ առվակից գո-  
յացել եր մի լճակ: Լճակի ափերը ծածկված եյին  
թարմ ու խիտ խոտարույսերով, իսկ գեղի վեր ձըգ-  
տում եյին բարձրաբերձ փյունիկյան արմավենիները.  
Նրանց տերեւաշատ գլուխները ցոլում եյին լճակի  
պայծառ ու հանգիստ ջրերում: Աղբյուրի մոտ կար  
մի կիսավեր տնակ, իսկ քիչ հեռու՝ փշավոր ըույսե-  
րից հյուսված եր բարձր-կենդանի ցանկապատը.  
ցանկապատով պաշտպանված եր հոտերի գիշերելու  
տեղը. ցանկապատի մյուս կողմում հովիվների բնա-  
կավայրն եր:

Ճամբորդներն աշխատանքը թողնելով վարձված  
ծառայողներին՝ զնացին դեպի արմավենիները և  
նրանց հովանու տակ կարկաչող աղբյուրը:

Իվան Պետրովիչն իր ուղտի վրայից մի քանի արկդ  
շած բերեց, մեկի միջից հանեց լուսանկարչական ա-  
պարատը, բանկաներ, միջտառ բռնելու ցանց և դիտե-  
լու մի քանի գործիքներ: Անհրաժեշտ իրերը վերցնե-  
լով յեկավ, նախ աղբյուրի ջուրը փորձեց, ապա  
անմիջապես դիմեց ուզգիսի հետազոտությանը: Միտք  
թուժան ել միացավ նրան: Յերկար չտեսեց նրանց դի-  
տական զրուտանքը: Վորոշեցին զնալ հովիվների մոտ.  
Հարմար դտան՝ ամենից առաջ նրանցից տեղեկու-  
թյուններ հավաքելն ուզգիսի մասին: Հազիվ եյին մո-  
տեցել ցանկապատին, յերբ հանկարծ նրանց վրա թռան  
գամփոները, ու այն ե՝ ուղում եյին կծել նրանց, բայց  
նույն վայրկյանին յետ քաշվեցին, ճանաչեցին նորեկ-

ներին. մանավանդ աղղեցին նրանց վրա հովիվների ներից լսվող նախազուշացնող աղաղակները։ Սակայն կիսածայն մռմալով, յերբեմն ել սրածայր ուժեղ ատամները ցույց տալով, կատաղի աչքերով անընդհատ հետևում եյին ճանապարհորդներին։ Բավական եր հովիվ մի աննշան սուլոց, ձեռքի մի թեթև նշան, և եր հովիվ մի աննշան սուլոց, ձեռքի մի թեթև նշան, և անընդհատ հետևում եյին ճանապարհորդներին։ Բավատարություն ել սաստվեցին ու մի կողմ քաշվեցին։ Հավատարիմ պահապան չներ եյին, նրանք աշալուրջ պահպարիմ պահապան չներ եյին, նրանց աշալուրջ պահպարիմ նում եյին հովիվների ամբողջ կարողությունը, նրանց անասուններին գիշատիչներից, նույնիսկ առյուծից։ Յեզ այնքան վարժված եյին իրանց արհեստին, վոր յերբեմն հովիվ մի հայացքը, նրա մի թեթև կանչը, ձեռքի նշանը հասկանալով՝ գիտեյին թե ինչ պիտի անեն. անառունները քշում եյին արոտատեղը, կամ քշում բերում եյին գիշերվա հանդստավայրը. ցանկապատի զանազան կողմերում բռնում եյին իրանց մշտական դիրքերը և մինչև առավոտ չեյին հեռանում ցանկապատից։

Հովիվները ժամանակին հասան։ Բավական ել նըրանց յերկու յերեք սաստող կտրուկ կանչը, հովիվական մահակի սպառնացող տեսքը, վոր չներն անմիջապես լույսին և անցնեյին իրանց նախկին դիրքերը։

Միտր Թոմասն ու մյուսները վողջունեցին հովիվներին։

— Տափաստանն այստեղից հեռու յեւ, — հարցրեց իվան Պետրովիչը։

— Վո՛չ, այնքան ել հեռու չեւ, — խոնարհ ձայնով պատասխանեց հովիվը, — մեր ուղիսը վերջինն ե, համարյա անապատի ծայրին. մի քիչ ել վոր գնաք, կհամարյա անապատի ծայրին, ապա կմոտենաք դյուղերին, ուր նեք տափաստանին, ապա կմոտենաք դյուղերին։ Կողմն ե, ձեր գնացած ճանապարհի ուղղությամբ։

— Հո վտանգավոր վայր չե՞ր ուղիսը։ Գիշատիչներ, ավաղակներ պատահում են, թե վոչ հարցրեց միստր Թոմասը։

— Մի քանի որ առաջ մեր ուղիսից վոչ այնքան հեռու՝ տափաստանի ուղղությամբ, տուարեգները հար-

ձակվեցին վաճառականների քարավանի վրա։ Հարուստ քարավան եր, այդ մասին լսած կլինեք անշուշտ։ Բայց վաճառականները լսվ եյին դինված։ Ինչպես պատմում են՝ տուարեգներն անսպասելի պարտություն են կրել ու փախել են մի քանի սպանված թողնելով ավաղների մեջ։

— Իվան! Պետրովիչ, — ասաց միտր Թոմասը, — չը լինի՞ թե այն տուարեգներն եյին, վորոնք մեղ հետ բարեկամաբար բաժանվեցին. անսովոր բան եր ալազակ տուարեգների համար։

— Յես ել այդ եմ կարծում. նրանք լավ գիտեն՝ ո՛ւ վրա կարելի յեւ հարձակվել։ Մենք վաճառականներ չեյինք։

— Իսկ գաղաններն անհանգստացնո՞ւմ են։

— Ո՛, այդ հո կա, այո՛, բավականին հաճախ. մեր անասունները նրանց գրավում են. վերջերս հանգիստ չունենք առյուծների ձեռքից։

— Ինչպե՞ս, առյուծնե՞ր ել կան ձեր կողմերում, — մեջ մտավ ուրախացած իվան Պետրովիչը, վորին ամենից շատ վորսորդությունն եր հետաքրքրում. գիշատիչների վորսն ամենամեծ հաճույքն եր նրա համար։

— Իհարկե առյուծներ ել կան, — ասաց վոռքը ինչ զարմացած հովիվը, — միթե՞ չգիտեյիք. հենց անցյալ որը յերկու առյուծ հարձակվեցին մեղ վրա ու յերկու վոչ խար փախցրին, չներից մեկին մահամերձ գըտ գղեցին։ Առյուծներից մեկն հո շատ համարձակ, անվաին յերեսում. միշտ մեծ վնասներ է հասցնում և այնպես չքանում, վոր հետքն անդամ չես գտնում։ Մեր հոտերի ահարեկիչն ենա։ Բավական ե, վոր նա յերեսաց, իմացի՛ր վոր անասուններից մեկը կպակսի։ Անկարելի յեւ մի բան անել։

— Այդ շատ լավ յեղավ, — ուրախ մեջ մտավ իվան Պետրովիչը։

— Ինչ ուրախալի բան ե այդ, — զարմացավ միտր Թոմասը. — լսվ ե վոր նա չհասկացավ ասածդդ. Խոսք չկա իհարկե, վոր լավ ցավակցություն հայտնեցիր նրան։

— Ինչպես կարելի յէ չուրախանալ. մի բախտավոր դիպլած և այս, վոր մենք ռազմին յեկանք: Մենք կը պահնենք առյուծին, իսկ նրանք կաղապեն այդ գիշտափիչ:

Հովհաններն ուրախացան, յերբ իմացան իվան Պետրովիչի ու նրա ընկերոջ հմուտ ու փորձված վորսորդ լինելու մասին: Նրանք առաջարկեցին հենց այս գիշեր հետապնդել գիշտափիչներին: Անցած որն ել յեկել եյին անապատի արքաներն իրենց սովորական տուրքն ստանալու: Իվան Պետրովիչին հենց այդ եր հարկավոր:

## ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻԹՈՒՄԸ

Գիշեր եր: Բոլորը վրաններում եյին: Մի վրանի առաջ խարույկ եր վառած: Դիմացկուն ճյուղերից յեռոտանի եյին կապել, ապա մեջ տեղից թեյաման կարիել: Խարույկի մոտ նստած եյին իվան Պետրովիչն ու նրա հայրենակից՝ վորսորդ Մեդյանցելը: Զըռոցում եյին և մեկ—մեկ ել անհամբեր նայում թեյամանին:

Յերկուսն ել մաքում, պատբասուում եյին հրացան-ները: Քնած չեյին նաև պահակ չները: Թեթև շշուկը, խշչոցն անդամ իսկույն վոտքի յեր կանգնեցնում դամփըներին. սրատես աչքերով դիտում եյին խավար հեռուն և կցկոտւր վոռնում: Ամեն տեղ անդորրություն եր տիրում: Անասունները վաղուց քշված եյին ցանկապատի ներսը: Փշածածկ կենդանի բույսերով բաժանված տեղը, կամ ինչպես ասում եյին տեղացիները, «ձերի-րան»—մի շրջան եր՝ 20-30 մետր տրամադով: Խիտ աճող փշավոր կակտուսից կաղմած ցանկապատի միջով անցնել անհնարին եր. միակ միջոցը— նրա վրայով ցատկելն եր:

Շները բոնել եյին իրանց սովորական դիրքերը: Հովիվներից ել պահակ կար:

Ուզիսը յուռ եր. ողի խաղաղությունը խանդարում եր միայն թեթև քամին. արմավենիները հանգիստ եյին,

չեր լավում տերեների խշոցը ։ ։ խավարի մեջ արմավենիները հսկայական չափեր եյին ընդունել ։ ։ ճանապարհի մոտով հոսող առվակի ջուրն եր մեղմ կարկաչում ։ ։ մեկ-մեկ ել քնած ուղիսի հանգիստը խանդարվում եր չների կցկոտւր հաջոցից:

Իվան Պետրովիչը, բաձկոնը գցելով վրան, Մեդյանցեին գառնալով՝ ասաց.

— Տեսնո՞ւմ ես, Արկա՛դի Վեկտորովիչ, — նույնիսկ ցուրտ ել եր ։ ։ վո՞րքան տարորինակ ե ընությունը. ցերեկը սարսափելի տոթից ողն ու գետինն այնքան են տաքանում, վոր հազիվ ես շունչ քաշում. շիկացած ավազի մեջ մատդ յերկար պահել չես կարող. ձուն կարող ե խաշվել, մերկ վոտքերդ կայրվեն: Իսկ գիշերը ։ ։ ցըրտից դողում ։ ։ բը՛րբ ։ ։ իսկապես ցուրտ եր ։ ։

Մեդյանցեին ել նույն մտածմունքներով եր տարված: Նա ասաց.

— Նկատեցի՞ր, թե ինչպես անապատը հանկարծ ժթնեց, — իսկի մթնչաղ ել չտեսանք. հենց վոր արեւը թագնվեց հորիզոնի տակ՝ մութն անմիջապես ընկավ. ։ ։ ի՞նչ սքանչելի գիշեր ե, վո՞րքան վառ ե աստղերի փայլը ։ ։ վո՞րքան գեղեցիկ ե անապատը գիշերով. ։ ։

Մի խշոց գրավեց նրանց ռւշադրությունը: Ոճ եր. սողաց անցավ: Գիշերվա սովորական այցելուներն եյին ոձերը, կարիճները: Քանի՛ քանի՛ անդամ վեր կացան տեղներից և հետազոտեցին վրանի շուրջը. թունավոր կարիճները, սարդերը և ոձերը հանգիստ չեյին տալիս:

Քնած չեր և ուղեկից Սելիմը: Յերեք քայլ հեռու պառկած նայում եր խարույկին և մտածում: Մի գուցե անցյալի հուշերն եյին զրազեցնում նրան: Շատ բան ե անցել գլխովը: Նա յեղել ե վաճառական-ների ուղեկից. ճանապարհորդների քիչ քարավաններ չեյին ապահով անցել անապատի ավազներով՝ նրա հմուտ զեկավարությամբ: Յեղել ե տուարեղների շարքերում, թալանների մասնակցել, ծառայել ե Ալժիրում և Ֆրանսական գաղութային բանակում, — վոչ մի բան



նրան հոգեպես չի բավարարել: Անապատը նրա կյանքն եր: Մարդկանց չհպատակվել, վոչ վոքից կախում չունենալ, միշտ ազատ, անհնազանդ —ահա նրա կյանքի նպատակը: Հավատարիմ արաբական նժռւյդը քիչ անդամ չի փրկել նրան վտանգից:

Սելիմը չեր սիրում վաճառականներին. յելլոպարցիներից ել խուսափում եր հենց նրա համար, վոր սրանք քայլ առ քայլ նվաճում եյին անապատը, սահմանափակում նրա ազատությունը:

Սելիմը գիտեր, վոր այս գիշեր վորսի պատրաստություններ եյին տեսել: Նա չեր ցանկանում յետ մնայ յելլոպարցիներից. համաձայնեց յերրորդ վորսորդի տեղը բռնել: Սելիմը յերբեք չեր բաժանվում իր հրացանից:

Կես գիշեր եր: Յերկինքը վայրիլում եր բազմաթիվ պայծառ աստղերով: Իվան Պետրովիչն ու Մեդյանցելին անվերջ թեյ եյին խմում, միստր Թոմասը քնած եր, Սելիմ՝ հուշերի մեջ խորասուզված:

Հանկարծ կարծես հեռու անապատում մի վորոտ թնդաց, արձագանքը տարածվեց ամբողջ ռազիսում: Խարույկի մոտ նստածներն իրար նայեցին զարմանքով: Իվան Պետրովիչը վեր ցատկեց, նայեց յերկնքին՝ ապարդ, մուղ-կապույտ աստղալից յերկինք եր: Բեպուին Սելիմն անվրդով գեռես նույն դրության մեջ եր, բայց հրացանը ձեռքից բաց չեր թողնում. նայում եր վորսորդների վրա, կարծես ուզում եր տեսնել, թե ի՞նչ տպավորություն թողեց նրանց վրա անհասկանալի վորոտո:

Ինչ կարող եր լինել. յերկինքը պարզ եր, մի հատիկ ամպ չեր յերեսում: Մի քանի վայրկյան մեռերային լոռություն տիրեց ուստիսում. յոի կարհաչյունն ել կարծես չեր լովում: Իվան Պետրովիչը կանգնած մնաց տեղում. լողությունը լարել եր և աչքերը հառել գեպի «ձերի-բան»: Յերկար չսպասուեղին... կտրուկ, բայց հուժկու, ապա վոռոտանման ահեռ մոռնոս նորից ցնուեց ուսդիսը և նրա բնակիչներին: Զայնն ալելի մոտ լովեց: Այս ու այն կողմից անհանդիսա մարդկային ստվերներ յերկա-

չին: Բոլորն ել զինված՝ խմբվեցին խարույկի մոտ: Սելիմը վեր կացավ տեղից, ստուգեց հրացանը. նա այժմ հասկացավ՝ ում վոռնոցն եր սարսուռ պատճառել ժարդեանց:

—Միայն չար վոզին կարող ե այսպիսի ահեղ ձայն ունենալ,— ասաց նա:

Շատ չանցավ՝ նորից լսվեց նույն վոռնոցը և այս ոնդամ այնքան մոտիկից և այնչափ ահեղ, վոր ամբողջ ուղիսը զարթնեց, ճամբուղները դուրս ըավալեցին վրաններից: Հովհանների մեջ իրարանցում ընկապ: Ուղտերը զարթնելով՝ վոտքի յելան հառաչելով, ապա փորձեցին թոկերից ազատվել՝ վտանդից փախչելու համար. կապանքները հազիվ եյին պահում նրանց:

Հազիվ հաջողվեց ուղտերին մի տեղ հավաքել, կապանքներն ավելի ամբացնել: Զերիբայում կենդանիներն արթնացել եյին, ամեն կողմից աղիողորմ աղաղակներ եյին լսվում... վոչխարները, այծերը, կովերը... բոլորն ել կանչում եյին, կարծես աղաչում եյին գուրս բերել նրանց անապահով ձերիբայից: Բնազդամբ ձիդ եյին թափում իրանց կյանքը փրկելու... ընկնում եյին այս ու այն կողմ, խփվում փշավոր ցանկապատին, ել ավելի բարձր աղաղակում հուսահատությունից: Հովհանները հանգստացնում եյին նրանց, բոլորին հավաքել եյին մեկտեղ, հօկում եյին ձերիբայի մուտքը:

Ավելի մեծ եր ձերիբայից դուրս գտնվող կենդանիների յերկյուղը. ձիյերը վախեցած խրինջում եյին, քթածակերը լայն բաց անելով՝ ծանր ընչում եյին, դողում ամբողջ մարմնով: Ծներն սկզբում քաջարար եյին հաջում, բայց շուտով նրանք ել վախեցած, պոչները քաշած, յերկյուղալից վոռնարով՝ համաքվել եյին հովհանների մոտ և քսվում նրանց վոտքերին:

Անկոչ հյուրի ձայնն այնքան ահեղ եր, վոր դեռ յերկար ժամանակ արձագանքում եր ուսդիսի հակառակ ծայրից: Լավ ե, վոր հովհանները ժամանակին զարթնեցին: Անսառններն իրար խառնված՝ փորձում եյին փլցնել ձերիբայի ցանկապատը. վոմանք ճգնում եյին վրայից ցատկել: Մի բնազդով եյին բոլորը բռնը-

ված—վորքան հնարավոր ե՝ շուտ փախչել մոտեցող  
թշնամուց:

Հովիվներին մի կերպ հաջողվեց անասուններին  
հավաքել ապահով տեղ, հանդստացնել: Շները չեյին  
մոռացել իրենց պարտականությունները. նրանք դա-  
դարեցին հաջելուց. նայում եյին հովիվներին ու սպա-  
սում նրանց հրամաններին:

Նորից տիրեց կասկածելի և խորհրդավոր լոռու-  
թյուն: Բոլորը չնչասպառ սպասում եյին: Հովիվնե-  
րից մեկը վազեց վորորդների մոտ:

— «Հոտերի ահարբեկիչն» ե, յեկե՞ք՝ շուտով դերք-  
բոնեք: Արդեն կասկած չկար, վոր առյուծն եր մոտե-  
ցողը: Լսել եր, բայց յերբեք չեր կարող յերեակայե-  
իվան Պետրովիչը, վոր առյուծի վոռնոցը կտրող ե  
այդքան ահարբեկիչ լինել: Նրա աղաղակից վոչ միայն  
կենդանին ե սարսափում, այլ և մարդու մարմնով  
սառսուռ ե անցնում: Առյուծի վոռնոցն իվան Պետրո-  
վիչի վրա ել ազդեց:

Առյուծն եր յեկել և իր հզոր կանչով նախազգու-  
շացնում, կարծես իր մշտական զոհն եր սպահանջում:  
Իվան Պետրովիչի ակամա յերկյուղը վայրէնական եր.  
անմիջապես նա զդաստացավ, հրացանը ձեռքին ամուր  
պահած՝ անվախ ու համարձակ քայլերով գնաց հո-  
վիվների կայանը՝ ձերիբայի մոտ: Բոնեց այնպիսի  
մի դիրք, վոր ձերիբան իր առաջը լինի, թագնվեց  
մի ավերակ տնակի փլատակների մեջ: Մեղյանցեվն  
ու բեղուինն ել հետեւեցին նրա որինակին. սրանք  
մասն ու վաճառականները մնացին վրաններում:

Զերիբան աղմկում եր բազմաթիվ կանչերով.  
մերթընդմերթ վոչխարներն եյին մայում, կովերն  
աղիորմ դողուղուն ձայնով բառաչում, ձիերը  
սմբակները խիում եյին գետնին ու վողբավի լորիւն-  
ջում:

Բոլորն ել լարված ուշադրությամբ սպասում եյին  
համարձակ հյուրին:

Հանկարծ դադարեցին բոլոր ձայները. թշնամու

մոտ լինելն այնպիսի յերկյուղ ազդեց, վոր բոլորն ել  
վայրկենարար կարծես չնչասպառ յեղան: Աաղիսը  
լուռ եր: Զերիբան ել խաղաղվեց: Թեթև շըուկն ան-  
գամ լսելի դարձավ: Զերիբայից տասը քայլ հեռա-  
վորության վրա, արմավենիների միջից, փայլեցին  
յերկու շարժուն պապղուն աստղեր: Առյուծի աչքեր  
եյին դրանք: Իվան Պետրովիչի սրատես աչքերը նկա-  
տեցին մթության մեջ դանդաղ քայլող առյուծին:  
Մի քանի բողեք չանցած՝ յերեաց յերկրորդը՝ առանց  
բաշեւ եղած առյուծն եր այդ, յերկուսով եյին վորսի  
դուրս յեկել: Վաղուց զգացել եյին վորսը և համար-  
ձակ յեկել եյին հովիվների կայանը: Նրանց քայլ-  
վածքն անլսելի յեր, միայն չոր թփերը կամ թափ-  
թփված չոր տերեւներն եյին խշում:

Առյուծները մոտեցել եյին ձերիբային. ցանկապա-  
տի փշերը խանդարում եյին. մեկ առաջ եյին գալիս,  
մեկ յետ գնում, գլուխը վեր բարձրացնում, նայում  
ցանկապատին, կարծես չափում եյին նրա բարձրու-  
թյունը:


Իվան Պետրովիչը յերկյուղից և անհամբերությու-  
նից դողում եր, միաժամանակ վախենում եր ձեռքից  
դուրս թողնել հազվագյուտ, հարուստ վորսը: Սիրտն  
անսովոր թափով զարկում եր, քիչ մնաց հրացանը  
ձեռքից ընկներ: Վերջին ուժերը հավաքեց, վորսորդա-  
կան անվեհերությունը նորից տիրեց նրան: Նա պարզ  
տեսնում եր չորս փայլուն վառվուն աչքեր, ճիշտ  
այնպես, ինչպես կատվի աչքերն եյին փայլում մթու-  
թյան մեջ: Նոր մտածեց, վոր աչքերի այդ փայլն ել  
ահարբեկիչ ազդեցություն կարող ե ունենալ անասուն-  
ների վրա:

Առյուծը հանկարծ կանգ առավ, փարթամ բաշով  
դարդարված գլուխն այս ու այն կողմ շարժեց. զդաց  
թշնամու պատրաստությունները:

Վորտորդները մոռանալով մոտալուտ վտանգը՝  
սառնասիրտ, հրացանները պատրաստ՝ նշան դրին.  
լավ դիտենալով, վոր անհաջող հարվածը շատ վատ  
հետեւնքներ կարող եր ունենալ:

Անասունները, թեև ձերիբայում շրջապատված,  
պաշտպանված եյին ցանկապատռվ, հովիսիններով և  
գամփոններով, բայց ելի դողում եյին: Հովիվններն ել  
պատրաստ եյին, վոմանք պապական հին հրացանով,  
վոմանք մահակով, կամ նիզակով վորոշել եյին ժամ-  
նակցել ջարդին: Նախորոք համաձայնության յեկան,  
վոր առաջին հարվածն իվան Պետրովիչինն ե: Սա զեռ  
յերկար ժամանակ տատանվում եր. նրա հարվածից  
եյին կախված հետագա գործողությունները: Ընկեր-  
ները միայն վտանգի դեպքում պիտի կրակեյին:

Յերկար սպասել չեր կարելի: Յերեաց յերբորդ  
առյուծը, ավելի անհամբերն ու համարձակը: Կատ-  
կածելի լոռությունը նրան շփոթեցրեց: Անասունների  
մոտ լինելը, սննդի ախորժալի հոտը գրգռում եր  
նրան: Արագ քայլերով առաջ դնաց, ապա մի քանի քայլ  
շանկապատի բարձրությունը, ապա մի քանի քայլ  
հետ զնաց, մի քանի անդամ պոչը դեպի վեր շար-  
ժեց... պատրաստվում եր թոփչք դործելու: Յետեի  
յերկար վոտքերն ավելի հաստատ հենելով գետնին՝  
պատրաստվում եր մարմինը վեր թոցնելու և ձերի-  
բայի ներու գցելու... այն ե, ուզում եր ցատկել,  
առջևի վոտքերը հողից կտրվեցին... հենց այդ վայր-  
կյանին մեկը մյուսի յետեից լսվեցին հրացանի դար-  
կեր: Առյուծը յետ-յետ քաշվեց, բարձրացավ յետեի  
վոտքերի վրա ու վայր գլորվեց, բայց իսկույն մոտքե  
կանգնելով՝ կատաղի արագությամբ հարձակվեց  
իվան Պետրովիչի վրա. նրա կողմից եյին լսվել հրա-  
ցանի զարկերը: Իվան Պերտրովիչը ժամանակին հրա-  
ցանի յերկու գնդակներն ել իրար յետեից արձակե-  
ցանի յերկու գնդակներն ել իրար յետեից արձակե-  
ցանի զեղը փոխել եր: Առյուծն այնուամենայնիվ հաս-  
ում տեղը փոխել եր: Առյուծն այնուամենայնիվ ընկներ  
նելով նրան՝ զիչ եր մնում ամբողջ մարմնով ընկներ  
նրա վրա ու վերջ տար վորորդի կյանքին, սակայն  
նրա վրա ու վերջ տար վորորդի կյանքին, լարախաղացի  
իվան Պետրովիչը պակաս ճարպիկ չեր, լարախաղացի  
արագությամբ ու ճկունությամբ դուրս ծկվեց առու-  
ծի թաթերի տակից ու թափալոր լինելով՝ թաղնվեց  
թփուտների մեջ: Թփուտները խանգարեցին առյուծի  
վերջինս նորից կանգ առավ: Թեև ի-  
հետապնդումը, վերջինս նորից կանգ առավ:



վան Պետրովիչի ընկերներն ել կրակեցին, բայց ան-  
հաջող: Իվան Պետրովիչն անմիջապես ուշքի յեկալ,  
հրացանը պատրաստ սպասում եր նոր հարձակման:

Առյուծի վերքը լուրջ եր, թեև վոչ մահաբեր: Կա-  
տաղի մոնչալով այս ու այն կողմ եր ընկնում նա,  
վորսորդներին վորոնում:

Հանկարծ մի մարդկային աղիողորմ կանչ բոլո-  
րին ցնցեց: Զոհն ոգնություն եր աղերսում: Մոռա-  
ցած ամեն վտանգ՝ վորսորդները դուրս յեկան թա-  
գըստոցից և վազեցին ոգնության: Նույնիսկ միտք  
թումասը, վաճառականներից մի քանիսը դինված շտա-  
պեցին դեպի սարսափելի վայրը: Վոչ վոք չհամար-  
ծակվեց մոտենալ առյուծի ճանկերին զոհ դնացած  
դժբախտին. ծառաններից մեկն եր նա, վորին առյուծը  
տեսավ այն ըռպեյին, յերբ նա անդգուշաբար դլուխը  
զուրս ցցեց թփերի տակից. յեկել եր ոռւս վորսորդի  
և առյուծի մենամարտը դիտելու: Իհարկե առյուծն  
անմիջապես ցանկացավ նրանից առնել վրեժը: Մարմ-  
նի ամբողջ ծանրությամբ ընկավ նրա վրա, դլուխը  
չպարտ բարձրացրեց, սպասում եր նոր թշնամիներին:  
Յերկաթյա թաթերից մեկն արարի դլխի վրա յեր,  
մյուսը՝ մեջքի. ճիրանները խրվել եյին մաշկի մեջ,  
վերքից արյուն եր հոսում: Առյուծի տակից դուրս  
չափասարազոր եր մահվան. յեթե փորձեր, ա-  
ղալը հավասարազոր եր մահվան. յեթե փորձեր, ա-  
ղալը անմիջապես ճիրանների զոհ կդառնար: Իսկ  
այժմ թեև կենդանու մարմնի տակ ճզմված եր, բայց  
ելի փրկության հույսը չեր կորցնում. շնչառա-  
կում եր, ըթունքներն աղերսանք եյին մրմնջում:  
Հովհանների մի մասը մնաց ճերիբայի մոտ՝ անասուն-  
ներին մյուս առյուծներից պաշտպանելու համար:

Իվան Պետրովիչը և Մեղյանցը վճռեցին՝ ինչ  
զնով ել լինի՝ փրկել արաբին: Իվան Պետրովիչը զգում  
վոր շատերի հայացքն իր վրա յեր: Մենակ, ան-  
եր, վոր շատերի հայացքն իր վրա յեր: Մենակ, ան-  
կանզնեց շատ մոտ և անմիջապես հրացանն տողեց  
առյուծի ճակատին: Առյուծը կարծես շփոթվեց վոր  
ամամարդակությունից: Յերախը լայն բաց

լով՝ ցույց տվեց իր մեծ, մահարեր, կարծր ժանիքնե-  
րը և բազմաթիվ սուր բշտիկավոր սեղանատամները:

Առյուծին պետք եր սպանել—ուրիշ յելք չկար:

Իվան Պետրովիչի մոտենալը, նշան զնելն ու հրա-  
ցանն արձակելը մի քանի վայրկյան տևեց... մեկ...  
յերկու... հարված հարվածի յետևից...

Առյուծը մահամերձ՝ սոսկալի ճիչ արձակելով  
բարձրացավ յետևի վտաքերի վրա, տեղնուտեղը յե-  
րերաց և հանկարծ մեջքի վրա փովեց գետնին: Յեր-  
բորդ հարվածն ատրճանակից՝ վերջ տվեց առյուծի  
կյանքին: Մի քանի հոգի անմիջապես վաղեցին վիրա-  
վորված արարի մոտ. Հազիվ հաջողվեց առյուծի դիա-  
կը մի կողմ դցել. սարսափահար վիրավոր ծառային  
վտաքի բարձրացրին. նա ձեռքը տարավ գեպի արյու-  
նու ճակատը՝ վիրքը ծածկելու համար: Առյուծի ու-  
ժեղ ճիրանները լուրջ հետքեր եյին թողել: Նայելով  
արարի վրա՝ բոլորն ել զարմացան... յերիտասարդ  
արարի մազերը տեղատեղ սպիտակել եյին...

Յերկար չտեղեց առյուծի մահվան տաղնապը: Ան-  
հուսալի ճիզեր թափեց քիչ բարձրանալու, բայց ի-  
գուը. մի քանի տաղնապալից շարժումներ ես...  
մարմնի ընդհանուր դողոց, և անշարժացավ, հանած  
լեզուն մնաց դուրս ցցված: Բաշն արյունոտվել  
եր: Յերախը մնաց կիսաբաց, բերանից արյուն եր հո-  
սում, լեզուն թուլացած կախվեց դուրս:

Իվան Պետրովիչը բռնեց առյուծի լեզվից ու քա-  
շեց, մատները քսեց նրա մակերեւոյթին. լեզուն ան-  
հարթ եր, ամբողջովին ծածկված բշտիկներով: Հե-  
շեց, վոր սովորական կատվի լեզուն ել հարթ չե. ան-  
հարթ լեզվով կատուն ու նրա վայրենի ազգականները  
մորթին մաքրում են վոշուց, պարագիտներից: Առյու-  
ծի լեզվի յեղջրային բշտիկներն այնքան սուր եյին,  
վոր յեթե ուժգին քսվեյին մարդու մաշկին, վերջինս  
անալատճառ արյունալից ակոսներով կծածկվեր:

Լավ յերեսում եյին առյուծի ատամները: Նրանց  
տեսքից շատերի մարմնով սառսուռ անցավ: Իվան  
Պետրովիչը յերկակայեց իրեն բռնած՝ չորս ուժեղ

յերկար ժանիքներով, պատառութած՝ սրածայր կտրիչ-ներով, և վերջնականապես զգղղված, մանր-մանր տբորփած՝ սուր բշտիկավոր սեղանատամներով։ Այդ-պես են մսակեր, կենդանի վորուտող գիշատիչների ատամները։

Առյուծի մաշկը քերթեցին։ Իվան Պետրովիչի առաջին հաղթանակն եր Ս.Փրիկայում։ Բոլորն ել նրան գովարանում եյին ու փառաբանում։ Մահվան ճիրան-ներից աղատված արարն այդ որվանից դարձավ իվան Պետրովիչի ամենամտերիմ բարեկամը։

— Ո՞ւր մնացին մյուս առյուծները, — հարցրեց մեկը։

— Զեն յերեսում, — ասացին Հովհիվները, — Հրածգության ձայնը և ընկերոջ մահամերձ մոնչողը լսելուն պես՝ փախան վախնեցած։ Այժմ մենք յերկար ժամանակ տղատ ենք նրանց այցելությունից։

Անասունները հանգստացան։ Նրանք ել զգացին, փոք մրրիկն արդեն անցել են. ընկան խորը քնի մեջ։ Միայն շներն, ըստ սովորականի, մերթ ընդ մերթ հաջում եյին. բայց շուտով սրանք ել հանգստացան։

Առյուծի դիմակի առաջ գեռ յերկար ժամանակ խոնդած եյին ուղիսի ընակիչները։ Մի քանիսոր նրանցից կտրեցին առյուծի փոքր, կուծքը, հանելով սիրտը՝ մատմաս արին ու բաժանեցին հավաքված տղաներին։

— Այդ ի՞նչ են անում, ինչո՞ւ յեն ուտում, — հարցրեց իվան Պետրովիչը։

Սրաներից մեկը պատասխանեց։

— Այս ուղիսում Հովհաննին Ս.Փրիկայից, Աստարան յրջանից յեկորներ կան. այնտեղի արարների սովորությունն եւ տղաներին առյուծի սիրտ են ուտեցնում, փոք քաջ լինեն։

Իման Պետրովիչը վերօրեղ առյուծի մորթին և մի քանի մարդկանց ոգնությամբ տարավ իր վրանը։ Վրանի առաջ նստեցին իստույիկի շուրջը։ Բոլորի քունը փախամի։ Խարույկն ուժեղացնելու համար ցախավելացրին։ Հաջող վորսն աշխուժ զրույցի առիթ

դարձավ. վերհիշում եյին վորսորդական կյանքի անցած գեպքերը։

— Իվան Պետրովիչ, ի՞նչ եյիք զդում, յերբ համարձակ քայլերով այնքան մոտեցաք առյուծին, ապա մահացու հարված հասցրիք, — հարցրեց Մեղյանցեր։

— Ճիշտն ասած՝ թեև քաջարար մոտեցա, բայց սիրտս թրթում եր։ Լինում են բոպեներ, յերբ մարդ մոռանում ե ամեն վտանդ, մանավանդ դժբախտության առաջ։ Բայց յես փորձից գիտեյի, վոր յերբեմն կենդանու վրա կարելի յե ազդել սառնասիրտ վճռականությամբ, անվախ ու համարձակ մոտենալով նրան. . . կենդանին հանկարծակի դալով շշմում ե, և իւարեկ, մինչև նրա ուշքի գալը, կյանքին վերջ ես տալիս։ Յես ուղեցի նմանվել այն հովվին, վոր հոռմայեցի Կլավդիոսի թագավորության ժամական զարմացրեց բոլորին առյուծ բռնելու իր շատ հասարակ ձեռվ։ Ի՞նչ եք կտրծում, ի՞նչ արեց նա. . . համարձակ մոտեցամ, իր հագուստը ձգեց առյուծի գլխին, ու ել վոչինչ. առյուծն այնպես շշմեց, վոր հնարավոր յեղավ նրան իսկույն կապկալել. . .

Այժմ խոսեց Մեղյանցեր։

— Դուք վերհիշեցիք հին դարերը։ Այժմ հանկարծ մտքովս անցավ, թե ի՞նչ սոսկալի քանակությամբ առյուծներ եյին վոչնչացնում հնագարյան կրկեսներում. . . Կրկեսում Պոմպեոս արքան ըեմ եր հանում վեց հարյուր առյուծ. . . իսկ Ադրիան թագավորը, պատահում եր, վոր կրկեսում զոհաբերում եր մինչև հարյուր առյուծ. . .

— Ճի՞շտ ե, Մեղյանցե, մեր ժամանակներում ել պակաս չեյին կոտորի նրանց, յեթե վորոշ արգելքներ չինեյին. յես նախ քան իմ այս կողմեր դալս հատուկ թույլտվություն ստացա յերեք առյուծից ավելի չվորսալու. . .

Դեռ յերկար զրույում եյին վորսորդները։ Խարույկի կրակը թույացել եր, նորից փաւա գցեցին։ Ճամբարը բոլորովին լուռ եր։ Խաշնարածների կայտնումն ել աղմուկը դադարել եր։ Զերիբայում անո-

սռնները հանգստացան ու խոր քնի մեջ ընկան։ Ասոր զալից յերկինքը նույն խաղաղությամբ ու պայծառությամբ լույս եր սփռում ուղղիսի վրա...

Հոգնած ուղղիսը քնած եր։

## ԱՌՅՈՒԹԻ ՎՈՐՍԸ

Ընկերոջ մահամերձ ճիչը հասավ մյուս յերկու առյուծներին։ Նրանք հասկացան, վոր ժամանակ ե արդեն կյանքը փրկելու մասին մտածելու։ Մի բոպե կանգ առան, ուշադիր հետեւում եյին սաղիսի աղմուկին, սպասում եյին վիրավոր ընկերոջը։ Ընկերը չեկավ։ Վտանգն ակներե եր։ Բայց սովոր հանգիստ չեր տալիս նրանց։ Այնքան մոտ լինել հարուստ, համեղ վորսին և հանկարծ հրաժարվել։


Այս ու այն կողմ թափառեցին, հեռու եյին, վոչ վոք չեր նկատում նրանց։ Սպասեցին, մինչև վոր ուսպիսը նորից խաղաղվեց։

Ավելի համարձակ առյուծն անձայն առաջ անցավ գեպի ձերիբան, ընտրեց ավելի ապահով տեղ։ Բարձր թփերի յետեւում թագնված՝ դիտում եր և հարձակման համար հարմար տեղ վորոնում։

Ուղիսը խոր քնի մեջ եր։

Յերբ հասավ հարմար բոպեն, աննկատելի, անձայն քայլերով մոտեցավ ձերիբային։ ըները վոչինչ չզգացին, վոչ մեկը չհաջեց։ Առյուծը մոտենում եր այն կողմից, վոր կողմից քամին մեղմորեն փչում եր գեպի նա։

Մի քանի քայլ ևս մոտեցավ, թռիչքի համար ընտրում եր հարմար տարածություն։ Հաղիս եյին զգացել չները նրա ներկայությունը, հանկարծ նրանց հաջոցն ու առյուծի հարձակումը մեկ յեղավ։ առյուծը ցատկեց ձերիբայի ներսը, ընկավ ուղիղ սարսափահար յեղած անսառնների մեջ, նստեց մի հորթի վրա։ յերկաթյա թաթի ուժեղ հարվածով անշնչացրեց նրան, պարանոցը խոչոր ատամների մեջ առնելով նորից դուհի հետ միասին դուրս ցատկեց ու վաղեց։



Անասուններն ահ ու դողի ու իրարանցման մեջ բոլորն ել դեպի դուռը վագեցին, մի քանիսը դեպի ցանկապատը։ Հրում եյին իբրա՝ ճղնելով դուրս վախչել. այնպիսի բազմաձայն աղաղակներ բարձրացան, վոր հովիվներն անմիջապես զարթնելով վագեցին դեպի ձերիբան։ Շների ոգնությամբ հաղիվ կարողացան զապել, հանգստացնել անսառններին։

Իվան Պետրովիչն ու Մեդյանցնը յեկան այն ժամանակ, յերբ առյուծն իր զոհով վաղուց չքացել եր խավարի մեջ։ Սկսեցին հրացաններն արձակել այս ու այն կողմ, սակայն իզուր. առյուծն այնքան ճարպիկ և ուժեղ եր, վոր ժամանակին ծլկվեց վտանգից։ Յանկալի զոհին հասնելու համար բարձր ցանկապատը նրան չեր կարող խանդարել, դժվար չեր նաև զոհը բերանին դուրս ցատկելը։ Ընկերոջ մահն ել չաղղեց նրա վրա։

— Այդ ի՞նչպես կարողացավ ցանկապատի վրայով ցատկել և այն ել ծանր բեռով։

Հովիվներից մեկն ասաց։

— Ե՛, այդ ի՞նչ բան ե վոր, շատ թեթև բան ե, նա զոհը բերանին կարող ե մինչև անգամ ցատկել յերկու մետք բարձրություն ունեցող ցանկապատով։ Հենց մեզ մոտ մի այդպիսի դեպք պատահեց. առյուծը մատղաշ յեղն ատամներն առած՝ թռավ ցանկապատով

և գեռ յերկար տեղ քաշ ամփեց իր զոհը, մինչեւ վոր  
բոլորովին անհետացավ: Յեկ այդ բոլորը մեր աշքերի  
առաջ, մենք անուժ եյինք, ի՞նչ կարող եյինք անել  
մեր նահապետական կայծքարի Հրացաններով: Թվում  
ե ինձ, թե այսորվա առյուծն ել հենց նա յեր: Այնքան  
անվախ և ճարագիկ, այնքան վճռական ու խորա-  
մանէ... նա յե, վոր կա: Չես խարի նրան...

Հովիմները հաշտվել եյին կորստի հետ: Առյուծի  
համարձակ քայլը նրանց զինաթափ եր անում: Առա-  
ջին անդամը չեր, վոր այս առյուծն այցելում եր նրանց:  
Իվան Պետրովիչին շատ բաներ պատմեցին նրա մա-  
սին. նա հարձակվում ե այն կողմից, վորտեղից նրան  
ամեննին չեն սպասում. յերեւմ եր այն ժամանակ,  
յերբ բոլորը մոռացել եյին նրա մասին և մեկ ել տե-  
սար անսպասելի տնկվեց առաջդ: «Անսպատի դե,  
չար վոդի», — այսպես եյին անվանում նրան բոլորը,  
նրա մասին ուրիշ տեղերում ել շատ եյին խոսում:  
Անասուններից շատերն են նրան զոհ գնացել: Հաջող  
վորսը նրան միշտ քաջալերում եր և հենց այդ պատ-  
ճառով ել ուղիսի մշտական հյուրն եր:

Իզուր անցան վորսորդների վորոնումները:  
Առյուծը կարծես ջուրն ընկավ, նա չեր յերեսում:

Նա այդ ժամանակ շատ եր հեռու նրանցից:

Գալով մի ապահով տեղ՝ առյուծն իր եղի հետ  
սպասուածեցին հորթին և լավ մաքրաղարդեցին:  
Առաջին հերթին կերան վորոտիքը. շատ եյին սիրում  
այդ մասերը:

Առյուծի շուրջը հավաքվել եյին մանր գիշատիչ-  
ներ—շախկաներ: Հաճախ եր պատահում, վոր առյու-  
ծի զոհից նրանց ել եր բաժին ընկնում, ողափում եյին  
մնացորդներից: Զախկաներն այս անզամ շատ աներես  
եյին, ել չեյին՝ սպասում, վոր առյուծները վերջաց-  
նեյին ու գնային, շատ եյին սոված: Նրանք քանի  
զնում՝ ավելի համարձակ եյին դառնում. այս ու այն  
կողմից վրա եյին հասնում և զոհից մի կտոր սկոկելով՝  
թոցնում եյին առյուծի քթի տակից: Սկզբում առ-  
թոցնում եյին առյուծի եյին, համբերում եյին, յերբ զե-

շատիչների ախորժակներն ամելի մեծացան, արևու  
դժգոհությամբ այնպես վոռնաց, վոր չախկաները մի  
վայրկյան յետ քաշվեցին: Շուտով նորից շրջապատե-  
ցին առյուծին ու ելի առաջվա պես սկսեցին լավ կտոր-  
ներ թոցնել:

«Հոտերի ահարեկիչի» համբերությունը հատավ.  
այնպես խփեց իր թաթով աներես գիշատիչներից մե-  
կին, վոր նա մի քանի քայլ յետ չպատվեց: Առյուծնե-  
րը կատաղել եյին, հանկարծ յերկուսն ել վեր թռան  
և հարձակվեցին անկոչ հյուրերի վրա. մեկի փորը  
պատուեցին, մյուսի գլուխն արնոտեցին: Լավ դաս  
յեղավ նրանց. վախեցած գիշատիչներն զդացին առ-  
յուծների լուրջ զայրույթը և ցրվեցին մթության մեջ:

Գիշերը խաղաղ անցավ:

«Հոտերի ահարեկիչը» կուշտ կերել եր ու ծանրա-  
ցել. հենց հորթի մնացորդների մոտ ել քննեց:

Առավոտյան հենց վոր լույսը բացվեց, առյուծն  
ուղերձից իր վորջը: Եղը վաղուց եր վերադարձել,  
նա ձագերի հետ եր:

Առյուծի վորջը գտնվում եր ժայռերի մեջ: Վոր-  
ջի մուտքը չեր յերեսում, չորս կողմից ծածկված եր  
հսկայական քարակույտերով: Ամայի, կիսաանապատ  
տեղ եր. այս ու այն կողմ վախտ բույսերի տունկեր  
եյին յերեսում: Խոր ու լայն փոսն անցնում եր ժայռե-  
րի տակ: Առյուծի միակ թշնամին—մարդը հազիվ թե  
համարձակվեր վոտք զնել այս կողմերը: Վորջի առաջ  
ընդարձակ հարթ տեղ եր՝ պաշտպանված ժայռերով:

Յերբ «Հոտերի ահարեկիչը» վերադարձավ իր վոր-  
ջը, եղը նստած վորջի առաջ՝ ձագերն եր կերակրում:  
Արուն անցավ, մի կողմ նստեց հանգստանալու: Փոք-  
րիկ առյուծները սովորական ընտանի կատվի չափ  
եյին: Յերկու ամսից ավելի յեր անցել այն որից ինչ  
ծնվել եյին, արդեն վազվզում եյին ու խաղում:  
Սկզբներում մլավում եյին կատվի պես. բնավորու-  
թյամբ շատ եյին նման ընտանի կատուներին—ուրախ,  
վառվառ և խաղեր սիրող:

Յերբ կերան կշտացան, ձագերն այս ու այն կողմ  
վազեցին, միմյանց հրելով, իրար վրա նստելով, իրար  
գլորելով, մերթ մոր վրա եյին թափվում, վազվզում  
նրա մեջքի վրայով, հավաքվում մեջքին ու իրար հրե-  
լով ցած գլորվում: Թեև մորն անհանգստացնում ե-  
յին, բայց նա չեր տրտնջում, անվրդով դիտում եր  
ձագերի չարաճնիությունները, մի քանիսին մեղմա-  
րար լիդում, նրանց փոշոտած մուշտակը լիդելով  
մաքրում. փոքրիկներն եւ, հետեւլով իրենց մորը,  
իրենք եւ սկսում եյին մաքրվել փոշուց և մանր պա-  
րագիտներից. նրանց լեզվիկներն եւ անհարթ եյին և  
խողանակի նման մաքրում եյին ըուբդը:

Մայրն առանց տեղից շարժվելու դիտում եր նրանց  
խաղերը, լուրջ դեմքով, բայց մեծ բավականությամբ:  
Մաքրվելուց հետո, ձագերը նորից վազվեցին: Նկա-  
տեցին արուեն, վորի խիտ բաշը նրանց գրավեց. ձա-  
գերը խրվեցին նրա փարթամ բաշի մեջ ու նրա շուրջն  
եւ սկսեցին վազվել:

Հանկարծ ժայռերի մեջից լալեց մի կասկածելի  
շնուր. եղն ու արուն անմիջակես վոտքի յելան: Արուի  
բեխերը շարժվեցին տենդարար, ականջները լարվեցին:  
Մայրը ձագերին քշեց վորջի ներսը, կանգնեց նրանց  
առաջ ու լարված ուշադրությամբ նայում եր շնուրի  
կողմը. ձագերի համար պատրաստ եր իր կյանքը զո-  
հելու:

Արուն այս ու այն կողմը քայլեց, հետազոտեց քա-  
րաժայռերի բոլոր ճեղքերը, անկյունները: Բան չնկա-  
տեց: Հանդստացավ: Եղն եւ հանդստացավ: Չխանգա-  
րեց, յերբ ձագերը նորից գուրս թափվեցին ու նորից  
սկսեցին խաղալ: Յերկար չտեսց խաղը:

Արուն հանկարծ յետ—յետ քաշվեց, ձագերը նորից  
քաշվեցին գեղի վորջը: Ժայռերի մեջ յերեաց մի յեր-  
կար ոճ, սողաց ու անցավ: Առյուծների սպառնալի  
դիրքն ազդեց նրա վրա: Զագերն այլևս գուրս չեկան:  
Մայրն իր մարմնով ծածկել եր մուտքը: Հանդստի  
ժամն եր: Մոր հոգատարությունը գեռ յերկար պիտի  
տեսր: Մի տարրուց հետո ձագերն այնքան կաճեին,

վոր մեծ չափ կլինեն: Յերեք տարրուց հետո արու-  
ների գլուխը կդեղեցկանա փարթամ բաշով: Վեց, յոթ  
տարի յե հարկավոր, վոր լրիվ հասունանան: Եղն ավելի  
յե կապված ձագերի հետ: Նա արուի նման չի կարող  
հաճախակի մենակ թողնել իր ձագերին:

Յերեկը, տոթ որերին առյուծը սակալ եր վորսի  
դուրս գալիս: Այդ ժամանակ նա կամ իր վորչումն եր  
հանդստանում, կամ այնտեղ, ուր մնացել եր լուսագե-  
մին, յեթե իհարկե տեղն ապահով եր, շատ հաճախ  
թագնվում եր ժայռերի մեջ:

Յերեկոյան դեմ աշխուժանում եր: Մթնշաղին՝  
թողնում եր իր հանդստայան վայրը և քայլերն ուղղում  
գեղի սիրած վորսի կողմերը — նրան տեսնում եյին  
անապատում, զետի հովիտներում, անտառում, յեր-  
բեմն ոազիսներում:

Դուրս եր գալիս առյուծն իր թագստոցից... անա-  
պատը ղղողում եր նրա վորտալից, սարասի աղղող  
վոռնոցից: Վորսի ժամն եր այդ:

«Հոտերի ահարեկիչը» թողնում ե իր վորջը և գնում  
վորսի: Լուռ ե անապատը: Հեռվում հաղիկ նշմարվում  
եր ոազիսը: Նա չգնաց գեղի խաշնարածների կայանը,  
թողնելով այդ միայն ծայրահեղ և անհաջող թափա-  
ռումների գեղաքում անելու. նրանց մոտ կարելի յե գե-  
շերով ել հյուր լինել: Իսկ մթնշաղին նա կարող եր և  
բաց տեղերում վորսալ, մանավանդ ջրերի ափին:  
Ռազմից վոչ այնքան հեռու հոսում եր մի գետ:

Նրա ափերն եյին շտապում շրջակայքի կենդանի-  
ները: Գալիս եյին վայրի յեղները, ջայլամները զովա-  
նալու. ջուր խմելու եյին գալիս յերկարավոտ, յերկա-  
րավիղ ընձուղտները, արագավազ նրբակաղմ այծյամ-  
ները և ահագին յերամներով բազմատեսակ թոշուններ  
ծածկում եյին գետափը, ալեկոծում զետի ջրերն ու  
մեծ աշխուժություն առաջ բերում իրենց կանչերով,  
թևերի թափահարումներով:

Առյուծը յեկավ ուղիղ այս գետափը: Խսկույն չնկա-  
տեցին առյուծին: Նրա շեկ-ղեղնավուն մուշտակը,  
բոլորովին նման լինելով զետնի ղեղնավուն գույնին,

Ճռւլվում ու աննկատելի յեր դառնում։ Մանավանդ արևել մայր մտնելուց հետո առյուծի գույնն այնքան եր նման հողի գույնին, վոր հեռվից՝ անշարժ առյուծին կարող ելիք նմանեցնել անապատի սովորական ժայռերից մեկին։

Առյուծն աննկատելի մոտենում եր ջրին։ Յերբ բավական մոտեցավ, նա իր թոքերի ամբողջ թափով վոռնաց՝ սարսափ ու խելակորույս խառնաշփոթություն առաջ բերելով կենդանիների մեջ. ապա մեծ արագությամբ սլացավ նրանց վրա։ Առյուծի վոռնոցն իր նպատակին հասավ։ Կենդանիները սարսափահար աղաղակներով, առանց յետ նայելու, մի ակնթարթում ցրվեցին այս ու այն կողմ։

Շատերը շփոթված, այլայլված՝ գետի մեջ ելին վորոնում իրենց փրկությունը, ընկնում, անցնում մյուս ափը. մի քանիսն ել ցրվեցին մոտակա տափաստանում։

Կենդանիների խուռն զանդվածը մի ակնթարթում բաժանվեց բազմաթիվ խմբերի։ Առյուծին հենց այդ եր հարկավոր։ Բաժանելով նրանց՝ նա թուլացրեց կենդանիների գիմադրական ուժը, իսկ փոքրիկ մենավոր խըմ բերը նրան չելին կարող վնասել—նրանք ավելի անպաշտ պան ելին։ Զերբներից մեկն եր, վոր հոտից կտրված՝ մենակ վազում եր։ Առյուծը հասավ նրան, ցատկեց մեջքի վրա ու ճիրանները խրեց բաշի մեջ. հեծած գերբին ամեն կերպ աշխատում եր բռնել նրա զնչից։ Զերբըն և լ ավելի արագ վազեց, վերջին անգամ ուժերը հավաքեց, փորձեց իր վրայից թոթափել հեծյալին, բայց իդուր։ Առյուծն ուժեղ թաթի հարվածով զերբի դունչն այնպես վոլորեց, վոր նրա վողնաշարը կոտըրվեց. . . զոհը չնշասալառ՝ թուլացած գլխով վրայից դետին, չորս կողմ փոշի բարձրացնելով։

«Հոտերի ահարեկիչը» զերբին իր ասամների մեջ առավ ու շտապեց ապահով տեղ՝ սնունդը լափելու։

Դեռ յերկար ժամանակ գետափը ծածկված եր փոշու մշտւշով։ Միայն հոսող ջրի թեթև կարկաչյունն եր, վոր խանդարում եր տիրող լոռությունը։

\*\*\*

Ճամբորդների քարավանը յերկար չմնաց ոտղիսում։ Ջրի պաշար հավաքեցին, ուղտերն ել նախորոշ առատ ջուր խմեցին։

Հրաժեշտ տվին նրան, մի քանի կիլոմետր ևս անցան անապատով, ապա մտան տափաստանը։ Հաճախ, շատ հաճախ մեկ մեկ, կամ փոքրիկ խմբերով նրանք հանդիպում եյին տափաստանի կենդանիների։ Յերկար, սրածայր յեղջյուրներ ունեցող այծյամներն այնքան ել պարզ չելին նկատվում, նրանց մորթին հողի գույն ուներ։ Թույլ ու անողնական կենդանիներ եյին նրանք. նրանց փրկում եր արագ վաղքը և խմբական, հոտային կյանքը. միասին ավելի լավ ելին պաշտպանված։ Նրանցից շատերն ընկան վորսորդների գնդակներից։

Ահա ջայլամները. . . յերեք—յերեք, չորս—չորս յերամներ կազմած՝ արածում ելին քարավանի ճանապարհից վոչ հեռու։ Զանգուլակների հնչյունը գրավեց նրանց ուշադրությունը։ Գլուխները բարձրացրին, նայեցին խուզարկու աչքերով հյուրերին ու ելի շարունակեցին իրանց զբոսանքն ու ճաշկերութը։

Յերբեմն բարակ, հսկա ընձուղտն եր հեռվից զարմացած նայում ճամբորդներին։ Գլուխն առաջ եր ցցում, կարծես ուզում եր հոտից իմանալ—թշնամիներ, թե՞ բարեկամներ են նորեկները։ Համոզվելով, վոր վտանգի սպառնում իրանց, վեր ելին ձգում իրանց յերկարավիզ դրուխներն ու հատ ու կենդ ծառերից տերեկներ պոկում։ Մի քանիսն ուսում ելին գետնի վրայի խոտը։ Առջեի վրտքերն ավելի յերկար ելին, այդ պատճառով վրտքերը լայն տարածած իջեցնում ելին իրենց գլուխները, վոր գետնին հասնեն, ուրիշ կերպ դժվար եր խոտին հասնել։

Իվան Պետրովիչի ուրախությանը չափ չկար։

Նրանց առաջ բացվել եր խսկական կենդանանոց, բնական կենդանանոց, ազատ, առանց վանդակների։

Պատկերը հաճախ եր փոխվում, և նոր ու նոր կենդանիներ եյին հանդիպում:

Տոթ և խեղդող, անկենդան անսլատից հետո անչափ ուրախալի յեր զիտել կենդանիներին իրենց բնական միջավայրում: Հեռավոր ժայռաքարերի վրա նույնիսկ առյուծ տեսան... անապատի, տափաստանի կենդանիների ահարեկչին, վորը հպարտ, գլուխը վեր պահած՝ արձանի նման անշարժ՝ ուշադրությամբ զիտում եր անցնող քարավանը:

## ԱՆՏԱՌՈՒՄ

Յերեկոյան գեմ մոտեցան խիտ կանաչներին: Անտառներ եյին: Նրանց մեջ փայլում եր վազող զետի ջուրը: Բոլորն ել թեթևացած, լիաթոք շնչեցին: Ուղտերին փռխարինեցին եշերը և նեղը բնունակիրները քարավանն ավելի բազմամարդ դարձավ: Վաճառականների մի մասն ել միացավ միստր թումասին: Իվան Պետրովիչը չեր կարող մոռանալ իր անհաջող վորսը: Ճիշտ ե՝ փառք ու պարծանք նրան, նու մի առյուծ սպանեց, բայց ներել չեր կաբողանում իրան, վոր յրեկորդ առյուծը ծլկվել եր իր ճեռքից: Ետքաներ եյին պատմում այդ առյուծի մասին: Նա համոզված եր, վոր նորից պիտի հանդիպեր անհաղթ առյուծին: Գոնե արաբների ասելով, «Հոտերի ահարեկիչը» սննդի համար կարճ միջոցում մեծ տարածություններ եր անցնում: Մեկ յերենում եր անապատում, մի ուրիշ անգամ—տափաստանում, յերբեմն ել թափառում անտառում:

— Սելիմ, — հարցրեց իվան Պետրովիչը բեղուին, յերբ բոլորն արգեն վրանները խփած՝ հանգստանում եյին,—ի՞նչ ես կարծում, կարո՞ղ ենք նորից հանդիպել նրան:

— Ինչո՞ւ չե, հնարավոր բան ե. առաջին հանդիպած տեղն այնքան ել հեռու չե. յես գիտեմ, վոր մոտակա գյուղերը նրանից շատ են տուժել: Իդուր չեն

նրան «Հոտերի ահարեկիչ» անվանում: Հարկավոր գեպգում ամեն տեղ ել հասնում ե: Մեզ հետ հենց այս անտառում մի վաճառական—խաշնարած ե իջևանել. նա շատ անասուններ ունի. այդ արդեն բավական ե, վոր առյուծը մեզ այցի գա:

— Իսկ մարդու վրա հարձակվել ե յերեկիցե:

— Շատ քիչ գեպգերում... ինչպես յերեսում ե նրա վրա ազդում ե մարդու բարձր հասակը: Այս կողմերում մարդիկ ավելի շուտ կոկորդիլուներին, բեգուիններին են զոհ գնում, քան առյուծներին: Այս յեթե գնանք գեպի հարավ, այնտեղ արդեն յերկյուղալի են նրանք, իհարկե սոված ժամանակ, սովոր նա այնքան համարձակ ե դառնում, վոր գիշերները, չնայած վառած խարույկներին, պահակներին՝ հենց մարդկանց քթի տակից կենդանիներ ե թուցնում... Յեղել են զեպքեր, յերբ հարձակվել ե խարույկի շուրջը խրմքված մարդկանց վրա: Յեթե տեղացիներից հարցնես, նրանք կասեն՝ «Սոված առյուծը—սատանան ե վոր կա»:

Իվան Պետրովիչին շատ հետաքրքրեցին Սելիմի տված տեղեկությունները: Նա զգաց, վոր «Հոտերի ահարեկիչն» ել, հավանորեն, շատ վտանգավոր առյուծ եր:

Նո տասց.

— Սելիմ, յես նրան կսպանեմ:

Իվան Պետրովիչն այնպես հաստատ ասաց այդ, կարծես արդեն բռնել եր առյուծին և մնում եր միայն սպանել:

Սելիմը քմծիծաղ տալով նայեց իվան Պետրովիչի դեմքին և դլուխը բացասաբար շարժեց: Նրա թերահավատությունը իվան Պետրովիչին փոքր էնչ վիրավորեց: Ինչպես կարելի յեր կասկածել, քանի վոր արդեն մեկին սպանել եր:

— Մարդ չկա, վոր նրանից չվախենա, — ասաց անհուսալի յեղանակով Սելիմը.—բավական ե, վոր նրա վոռնոցը լսեն, բուրի մարմնով գող ու սարսօտ ե անցնում. դուք ինքներդ այդ զգացիք. բավական ե

Նրա հոյակապ, վիթխարի տեսքը, վոր հրացանը ձեռքումդ դողա և գնդակը նպատակին չհասնի: Ասենք ո՞վ գիտե, մի դուցե բախտ ունեցաք. բոլորն ել չնորդապարտ կլինեն, ազատ շունչ կքաշեն: Կապրենք կտեսնենք:

Անվախ վորսորդը բեղուինի խոսքերում հեղնանք զգաց: Այս անգամ նա ավելի վճռական կերպով հայտնեց.

— Բայց և այնպես, Սելիմ, յես այդ անհաղթ ստանային կամ կենդանի կրոնեմ, կամ կսպանեմ:

— Կտեսնենք, հաջողություն: Պատրաստ պիտի լինենք, նա հենց այս գիշեր կարող ե մեղ հյուր դալ:

Հենց այդպես ել յեղավ:

Գիշերը, չնայած պահակներին, պահապան չներին, խաչնարածը մի վոչխար զոհ տվեց: Շները վրա եյին հասել ոգնության, բայց մեկը նրանցից այնպես աղիողորմ աղաղակեց, վոր բոլորն ել զարթնեցին. Վորսորդները վաղեցին ոգնության:

Սելիմի և արարների կարծիքով անպատճառ «Հռտերի ահարեկիչն» եր: Այդպես սուս ու փուս, աննկատելի մոտենալ ու վոչխար թոցնել բազմաթիվ մարդկանց քթի տակից—կարող եր միայն լավ փորձված առյուծը:

Իվան Պետրովիչը խիստ հուղված եր: Ելի ձեռքից բաց թողեց: Ինչ զնով ել լինի, պետք ե նրան կենդանի բռնել, այո՛, կենդանի,— այդպես վորոշեց իվան Պետրովիչը:

— Տեսա՞ք, — լավեց Սելիմի ձայնը՝ չասացի՞՝, վոր պիտի դա:

Իվան Պետրովիչը նայեց Սելիմին. բեղուինն ամենեին ցույց չտվեց, վոր ինքը նկատել եր վորսորդի անհաջողությունը: Համենայն դեպք, նոր անելիքների մասին նրանք խորհրդի նստեղին: Սելիմը վոչինչ դրական բան չասաց: Անիրազործելի բան ե սպանելը, — ուր մնաց կենդանի բռնելը: Իվան Պետրովիչը չկարողացավ նրան համոզել:

Արաբ Մուհամեդը (վորի կյանքը փրկել եր իվան

Պետրովիչը) ընդառաջ գնաց վորսորդի համարձակ մտադերության: Իվան Պետրովիչը կենդանիներ ըըռնելու համար մի հատուկ թակարդ ուներ: Մուհամեդն առաջարկեց իր ավելի հեշտ միջոցը:

Մյուս որը նախ և առաջ իվան Պետրովիչը Մուհամեդի և մի քանի ծառաների հետ միասին սկսեցին անտառի շավիղներն ուսումնափրել, — առյուծի հետքեր եյին վորոնում: Մանավանդ շատ եյին հետքերը մոտակա բացատռում. իստոն այնտեղ տրորված եր, Պարզվեց (արաբի հաստատ համոզմունքն եր), վոր առյուծն այստեղից եր դիտում իր զոհը, այստեղ եր բերում զոհը: Արաբի ցուցումով խորը փոս փորեցին այստեղ. վերեկից փոսը ծածկեցին ճյուղերով, տերեւներով, խոտով և դրուշությամբ վրան դրին այն շան գիտել, վորին առյուծը պատառոտել եր:

Վերջապես անտառի խորքերում տերեւալից ճյուղերն ուժգին ցնցվեցին, տերեւները յերկարատև խշացին, մանավանդ չոր խոտերը: Յերեացին մի քանի կալիկներ. հե ի հե, վախեցած, հուզված աղաղակներով վաղեցին բացատռով ու անմիջապես բարձրացան ամենաբարձր ծառը: Նրանց հետապնդում եր մի մեծ կատվի նման գիշատիչ: Գլուխն առանց բաշի յեր, իվան Պետրովիչը շատ եր վախենում՝ հանկարծ նա չընկներ թակարդի մեջ. Նրա համար չեր պատրաստած թակարդը. գիշատիչն ուրիշ կողմով վագեց: Նրա ատամներում թիրտում եր վորքիկ կենդանին: Գիշատիչն առանց յետ նայելու, զոհը սկինդ բռնած՝ մտավ անտառի խորքերն ու անհետացավ:

Յերկար չանցավ, նորից ճռճռացին չոր խոտերը, ուժգին խշացին տերեւները. լսվում եր՝ ինչպես ճղները կոտրալում եյին: Բատ յերեսույթին կենդանի յեր վազում դեպի բացատը:

Իվան Պետրովիչի սիրտն ուժեղ բարտիեց. այդպես եր միշտ լինում, յերբ վորսին յերկար սպասելով՝ վերջապես տեսնում ու դեմ եր գալիս նրան:

Նոր մտքովն անցավ, վոր մեծ համարձակություն եր նրա կողմից՝ յերկուսով վորսի դուրս գալը: Թե

ինչպես վճռեց այդ քայլն անել, ինքն ել այդ լուվ չեր հիշում: Քայլն արված եր, և ետ գառնալու ժամանակը չեր: Ժամանակ ել չեղավ նահանջելու մասին մտածել: Մուհամեդը հաղիվ լսելիք ձայնով սուլեց: Հասկացավ, վոր նրան եր նշան տալիս: Նայեց բացատին, աչքերը զցեց բոլոր կողմերը. հանկարծ նրա հայացքը մեխավեց մի կետի վրա: Սրտի բարախումն ուժեղացավ, ուրախությունից, թեև յերկյուղից՝ ամբողջ մարմնովը դող անցավ: «Հոտերի ահարեկիչն» եր նրա առաջ, դուրս եր յեկել անտափից ու կանդ առել բացատի յեղբին: Գլուխն այս ու այն կողմ ուղղեց, վեր բարձրացրեց. Իվան Պետրովիչին թվաց, թե իր կողմը նայեց: Հոտերն եր ուսումնասիրում, կարծես մտածում եր՝ արժե՞ առաջ դնալ: Իվան Պետրովինչն աչքով չափեց նրա մեծությունը. պոչի ծայրից մինչև դունչն անպատճառ յերկու մետր կլիներ: Առաջին անգամն եր պատահում այդպիսի հսկա և գեղեցիկ առյօնի: Շատ եր տեսել զազանանոցներում, կենդանա բանական պարտեզներում, բայց սրա նմանը տեսած չեր: Փայլուն աչքերը մթության մեջ ուժեղ ցոլում եյին:

Վորսորդներն անշարժ ու անձայն նստած եյին իրանց զիբքերում: Դժվար եր նրանց տեղը դժմել: Հան կարծ առյօնը կտրուկ շարժվեց ու արագ քայլեց դեպի շան զիակը. զիշերված մեղմ քամին նրա քթին եր հասցըել զիակի հոտը: Սկզբում վաղքն արագ եր, ապա դանդաղ քայլեց, կանդ առավ վտանգավոր փոսից վոչ հեռու, նայեց յետե, ականջները լարեց: Կասկածելի բան չղգաց: Վճռական քայլերով վրա հասավ շան զիակի վրա, հաղիվ վոտքերը դրեց կարծեցյալ հողի վրա, չոր ճյուղերը ճոռացին, և առյօնը մի ակնթարթում ընկավ փոսի: Կարողացավ միայն առջեի թաթերով բռնել փոսի յեղրից: Այսպես կատաղի վոռնաց, մռնչաց, այնպես բարձրածայն, վոր վոչ միայն անտառի կենդանիները զարթնեցին, դողի մեջ ընկած՝ վագեցին այս ու այն կողմ, այլ և Մուհամեդը հանկարծակի յեղած գլորվեց ծառից՝ ընկավ, լուվ

և վատիռուկի խոտերի մեջ: Անմիջապես վոտքի յեղնելով՝ բարձրացավ ծառն ու հրացանը պատրաստեց:

Առյօնը զայրութին սահման չկար, ճիրաններով ճանկրտում եր, հառաջում... վոշին քուլա-քուլա ամպի նման բարձրանում եր վեր: Մի քանի անդամ փորձեց գուրս ցատկել, յերեաց նրա գլուխը, բայց ելի անհետացավ:

Իվան Պետրովիչը հրացանն ուղղեց փոսի կողմը: Հենց վոր նորից յերեաց առյօնը գլուխը՝ յերկու դնդակ սլացան զեպի նա: Առյօնն ավելի կատաղեց, փոսն ավելի լայնացավ, ճյուղերն այս ու այն կողմ եյին թափթիված: Մի քանի փորձից հետո հաջողվեց նրան դուրս գալ: Առանց յետ նայելու փախուստի դեմեց: Վորսորդները կրակեցին նրա յետեից, բայց անձող: Առյօնն ազատվեց: Վորսորդները մոտեցան փոսին, տեսան արյան հետքեր, վորոնք փոսից սկսած տարածվում եյին զեպի անտառը. կարելի յեր հետապնդել: Առյօնը վիրավորված եր, բայց վո՞րտեղից և ի՞նչպես—դժվար եր վորոշել:

— Դարձյա՛լ անհաջողություն, — զայրացավ Իվան Պետրովիչը:

Մուհամեդը չհուսահատվեց, խրախուսեց վորսորդին: Զարժեր հույսը կտրել, իրանք են մեղավոր, փոսը խորը պիտի փորված լիներ:

— Կրոնենք, մեր ձեռքից չի պրծնի, — ասում եր Մուհամեդը. — այդ ել բավական եր, վոր յեկավ զեպի թակարդը:

Վերազարծան իրենց իջևանը: Այստեղ արդեն բոլորը վոտքի վրա եյին:

— Հը՛, ի՞նչպես անցավ, — հարցըրեց միստր Թոնմասը:

— Անհաջող, — առանց իրողությունը ծածկելու ասաց Իվան Պետրովիչը:

— Իսկ մենք շատ անհանգստացանք. յերբ լսեցինք հրաձղություն, առյօնը մռնչոց, արդեն յերկուսիդ ել պատառուտած ելինք յերեակայում:

— Զե՞ւ, միստր Թոնմաս, այդ այնքան ել Հեջա չե:

Կույսը բացվել եր, յերբ քարավանը նորից ճանապարհ ընկալ: Գնում եյին անտառով: Քարավանը կրծատվեց. մի մասն անցավ դեպի մոտակա դյուղերը: Միստը թումասի խումբը և վաճառականների մյուս մասը գնացին արեելք: Վերջնական նպատակն եր-համել Նեղոս գետին, ապա վերադառնալ Ալեքսանդրիա: Միստը թումասի խմբի հետ եյին խաշնարածները. նրանք շուտով պիտի բաժանվեյին: Անտառի ճանապարհն այնքան ընդարձակ եր, վոր չեր խանդարում քարավանի ընթացքը: Միստը թումասը մտադիր եր անտառով մի քիչ զանդաղ անցնել՝ ուսումնասիրություններ կատարելու համար: Իվան Պետրովիչը բա-վականաչափ մանը կենդանիներ եր բռնել: Շատ եր մտածում առյուծի մասին: Արդեն վորոշ պատրաստություններ տեսել եր, մտադիր եր անպատճառ կենդանի առյուծ բռնել: Իսկ «Հոտերի ահարեկիչը» շարունակ հետապնդում եր նրանց: Ինչպես յերեւմ ե, նրա ստացած վերքը թեթև եր: Շներից մեկին պատառութեց, մի վոչխար ել զոհ գնաց: Առյուծը սովորել եր քարավանին: Հաճախ եր գալիս ու իր տուրքը վերցնում: Նա այնքան ճարպիկ եր, վոր գալիս եր այն միջոցին, յերբ նրան չեցին սպասում:

Իվան Պետրովիչի համբերությունը հատավ: Վճռեցին մի անդամ ել, և վերջին, ընդհանուր ուժերով բռնել նրան: Վորոշեցին սպատադործել թոկերից հյուսած ցանցանման թակարդը: Հարկ յեղած դեպքում մի կերպ վանդակ ել կարելի յեր պատրաստել, մի-այն բռնվի, այնուհետեւ հեշտ ե մտածել տեղափոխության մասին:

Մուհամեդին Իվան Պետրովիչի ծրագիրը դուր յեկավ: Քանի առյուծը քարավանից դեռ իր հույսը չի կտրել, կարելի յեր գործի դիմել:

Յերբ քարավանն իջևանեց ընդարձակ բացատում, Իվան Պետրովիչն ողնականներով անմիջապես պատրաստվեցին վորսի: Մուհամեդն սկսեց առյուծի հետ քերն ուսումնասիրել: Հետքերը բերին նրան մի վոր-բիկբաց տեղ՝ լավ պաշտպանված խիտ ծառերով: Առյու-

ծի սիրած տեղն եր այդ. դրան ապացույց—բազմաթիվ վոսկրների թափթփուկներ, կային և թարմ վոսկրներ, քիչ արնաթաթախ, մսի մնացորդներով վոչխարի գանգեր, ձիու վողնաշար... Մուհամեդի ուշադրությունը գրավեց ձիու թարմ դիակի կեսը: Զին յերեկ կամ հենց այսոր եր ընկել առյուծի ճանկերը: Առյուծն անպատճառ պիտի վերադառնա դիակը մաքրազարդելու. այդպես ե նրա սովորությունը: Մուհամեդն այդ լավ գիտեր: Խսկույն վազեց իջևանած տեղը՝ ուրախալի լուրն իվան Պետրովիչին հայտնելու: Իվան Պետրովիչին կարգադրեց ամեն ինչ պատրաստել, նույնիսկ պատվիրեց վանդակի մասին ել հոգալ:

Առանց հետաձգելու վորսի յելան:

Շտապ-շտապ վորեցին, այս անդամ ավելի խորը ծածկեցին՝ ինչպես հարկավոր եր: Զիու դիակի մոտ գրին թակարդը: Թակարդը վրանի նման եր, մի կողմից ամրացված եր հողին, մյուս յեղին ազատ եր: Զիու դիակին հասնելու համար առյուծն անպատճառ թակարդը պիտի մտներ: Դիակը կապած եր թակարդին. բավական եր քիչ թակարդի ներսն անցնել և դիակը թեկուղ թեթև կերպով քաշել, թակարդն անմիջապես կընկներ առյուծի վրա և այնպես կծածկեր նրան, վոր գուրս գալու հնարավորություն չեր լինի:

Ամեն ինչ պատրաստեցին Իվան Պետրովիչի ցուցումների համաձայն:

Այս անդամ Իվան Պետրովիչին ողնության յեկան Մեդյանցեն ու Սելիմը:

Յերեւու ժամ թագնված սպասում եյին: Մուհա-մեդի յենթաղը թյունը ճիշտ գուրս յեկավ: Յերեաց առյուծը, շտապ-շտապ քայլեց դեպի դիակը: Թա-կարդն ել քողարկված եր տերեւներով, ճյուղերով: Առյուծը չնկատեց վտանգավոր թակարդը, վազեց դեպի ոնունդը. հենց վոր քաշեց դիակից՝ ցանցն անմիջապես ընկալ վրան: Վորքան աշխատում եր տպատվել կապանքներից, ավելի ու ավելի յեր խճճվում

նրանց մեջ: Կատաղած մոնչում եր, ճիրաններով գետինը ճանկրում, թավալդոր այս ու այն կողմ ընկենում. պատահաբար ընկավ փոսի կողմը, ահա և փոսի վրան ե. ուժեղ շարժումներից ծածկոցը փլվեց, և առյուծն ընկավ փոսը: Ել տերև, Ել ճյուղեր, Հողի փշրանքներ... շատրվանի պես խփում, դուրս եյին թափվում փոսից: Փոսն այնքան խորն եր, վոր այլես առյուծի համար փրկություն չկար: Առյուծի հուսահատկան վոռնոցն արթնացրել եր անտառի բնակիչներին: Վորսորդները թեև ուրախացան, բայց առյուծի հուժկու ձայնը սարսափ եր աղքում նրանց. չեյին համարձակվում անմիջապես մոտենալ փոսին: Հրացանները պատրաստ սպասում եյին:

Լուրն անմիջապես հասավ համբարը: Միստր Թոռմասը, մյուս ճամբորդները հրացաններով շտապեցին ողնության: Ժամանակավոր պատրաստած վանդակն անմիջապես հարմարեցրին առյուծի համար, բերին փոսի մոտ: Մի քանի հոգով թոկերից բռնած սկսեցին շանցապատ առյուծին դուրս քաշել: Իվան Պետրովիչն ու Մեդյանցներ առյուծի փախուստի դեպքում պատրաստ եյին ամեն բոլե գնդակահարելու նրան: Մի կերպ դուրս քաշեցին ու խցկեցին վանդակը: Իզուր եր առյուծը յերախը լայն բաց անում, մոնչում, խոշոր ատամները ցույց տալիս. իզուր եր ճգնում թաթերն ազատել: Ցանցը մի քանի տեղ չդիմացավ նրա յերկաթյա մկանների ուժին, պատուեց, բայց ել ազատություն չկար նրա համար: Գցեցին վանդակը: Յեկան ճամբարը: Առյուծն անդադար մոնչում եր: Վոչփոք չեր համատում, թե «Հոտերի ահաբեկչին» վոչ թե սպանեցին, այլ կենդանի բռնեցին: Վաճառականները, ներդր բեռնակիրները յերկյուղով մոտենում եյին վանդակին, յերկար լուռ նայում խրոխտ, կատաղի առյուծին, և հանդիստ, առանց մի խոսք ասելու հեռանում: Յերբեմն առյուծի վոռնոցն այնպես եր սաստիանում, վոր շատերն անմիջապես վանդակից յետ եյին քաշվում. թվում եր, թե վանդակը չի դժմանտ նրա յերկաթյա թաթերին:

Իվան Պետրովիչի ուրախության չափ ու սահման չկար: Նա մի կողմ նստած արկղի վրա, հենված հրացանին, զմայլված նայում եր առյուծին, նայում ու անսահման հիանում նրա վիթխարի ու գեղեցիկ տեսքից: Զեր հավատում հաջողությանը: Այնքան եր տարված ուշադիր դիտողությամբ, վոր նրա ականջին չեյին հասնում մարդկանց յերկյուղալից շղուկներն և փափանքները: Ուշքի յեկավ, յերբ մեկը խփեց ձեռքի ափով նրա ուսին: Միստր Թոռմասն եր:

— Շնորհավորում եմ, իվան Պետրովիչ, — ասաց նա. — իսկապես հաղվագյուտ վորս ե: Միայն մի բան ե ինձ անհանգստացնում. ի՞նչ եք կարծում՝ դիմաց կո՞ւն ե վանդակը: Արժե, վոր նրան ձեր հայրենիք տանեք, բայց ի՞նչպես:

Իվան Պետրովիչը հայտնեց նրան իր մաադրությունի:

Հենց առաջին մեծ քաղաքում կիոխեմ վանդակը, կպատվիրեմ ամելի ընդարձակը: Յերբ հասա հայրենիք, անպատճառ նրան կնվիրեմ մայրաքաղաքներից մեկի գաղանանոցին:

Միստր Թոռմասը լիովին հավանություն ավելի նրա ծրագրին:

## ՎԵՐԱԴԱՐՁ

Մի շաբաթ ել անցավ: Քարավանն ապահով հասավ կահիրե: Առյուծի վանդակը տեղ-տեղ բեռնակիրները տանում եյին իրենց ուսերի վրա, տեղ-տեղ սայլի վրա տեղափոխում: Կահիրեյում դիտական նվատակ հետապնդող քարավանը յերկու մասի բաժանվեց: Իվան Պետրովիչը Մեդյանցներ և մի անդիացու հետ ուղեարգեց դեպի Ալեքսանդրիա: Այս քաղաքում նա բաժանվեց իր մտերիմ Մուհամեդից: Իր հաջողության մեջ նա վորոշ չափով պարտական եր այս հավատարիմ ողնական արարին: Մինչեւ կահիրե հասնելը, առյուծն իր վոռնոցով շատ եր ջղայնացնում ճամբորդներին: Առաջին որերը հրաժարվում եր

սննդից։ Նոր ընդարձակ վանդակում տրամադրությունը փոխվեց։ Թեև չորս պատի մեջ եր, բայց կապանքներից աղատ, մարդկանց վրա չեր զայրանում, բայց մոտ չեր թողնում նրանց։ Սովոր ստիպեց ավելի վիշող լինել և հպատակվել մարդկանց պահանջներին։ Իվան Պետրովիչի սիրալիր և հանգիստ վերաբեր մունքը մեղմացրեց առյուծին։ Իվան Պետրովիչն եր միշտ նրան կերակրում։ Սկզբում միսը գցում եր առյուծի առաջ, հետո ավելի համարձակ մոտենում եր վանդակին և ձեռքից կերակրում։ Առյուծն առանց բողոքի ընդունում եր սնունդը, ուտում ու մեկմեկ նայում վորսորդի վրա։ Ընտելացել, հանգստացել եր և հաշտվել իր դրության հետ։ Յերբեմն, կարծես հիշելով իր անցյալ աղատ կյանքը, սկսում եր սովորական վոռնոցը… Վանդակը ցնցվում եր նրա ձայնից։ Դիտողները վախեցած յետ եյին քաշվում։ Միայն իվան Պետրովիչն եր համարձակ, սովորել եր առյուծի ձայնին։ Մոտենում եր վանդակին և մեղմ ձայնով հանգստացնում նրան։ Առյուծը քիչ մեղմանում եր, ավելի մեղմ ու տխուր մշակում և մոտենում վանդակի ճաղերին։ Այնքան եր սովորել վորսորդին, վոր թույլ եր տալիս նրան իր թաթը շոյելու։

\*\*\*

Թեև վորոշ անհարմարություններով, այնուամենայնիվ իվան Պետրովիչին հաջողվեց առյուծին անվնաս հասցնել մինչև մայրաքաղաքը։

Առյուծին նվիրաբերեց կենդանաբանական պարտեզին, սակայն վորոշ պայման դրեց—առյուծին ընդարձակ տեղ տայ և լավ ինամել։

Իվան Պետրովիչն ամեն որ գալիս եր առյուծին այցելության։ Առյուծն իր թաթը դուրս եր բերուժ վանդակից։ Իվան Պետրովիչը սիրալիր շոյում եր, շոյում եր նրա փարթամ բաշը ու ձեռքից կերակրում նրան։ Ուրիշ մարդու մոտ չեր թողնում։ Ծառայի հետ չեր հաշտվում։ Բայց յերբ տեսավ, վոր ծառան միշտ իվան Պետրովիչի հետ եր մոտենում, նրան ել սովորեց։

Հետզհետե նա մեղմացավ. այլևս չեր մռնչում, չեր բարկանում։ Հեռվից նա զգում եր իվան Պետրովիչի մոտենալը։ Վորոշ ժամին կանգնում եր վանդակի ճարդերի մոտ, նայում վորոնող աչքերով հեռուն. յերբ մոտենում եր իվան Պետրովիչը, ուրախ այս ու այն կողմ եր քայլում ճաղերի ուղղությամբ, մեկմեկ թաթը դուրս բերելով։ Իվան Պետրովիչը շատ սիրեց նրան։ Զեր կարող յերեակայել, վոր այդպես պիտի մտերմանար. հազվագեղ բան եր չափահաս առյուծին մեղմացնելը։

Զրունող ամբոխը հաճախ եր կանգ առնում «Հոտերի ահաբեկիչի» առաջ։ Հիանում եյին նրա գեղեցկությամբ, վեհությամբ։ Կողմանակի մարդկանց խիստ արգելված եր նրան կեր տալ։ Յերբ դիտողներից մեկը պարզենալու համար մոտեցավ վանդակին և ցանկացավ նրան չոյել, առյուծը հանկարծ այնպիսի սպառնալի դիրք ընդունեց, վոր անվախ մոտեցողն անմիջապես յետ փաշվեց, կարծելով թե առյուծն արդեն դուրս ե յեկել վանդակից։

Ինչպիսի տրամադրության մեջ ել լիներ առյուծը, քավական եր, վոր իվան Պետրովիչը մոտենար, նա անմիջապես խաղաղվում եր. յերբ նկատում եր նրան, ամբոխի մեջ, պոչը յերեցնելով մոտենում եր ճաղերին ու թաթը դուրս բերելով՝ դիմավորում նրան։

Ուրեմն անցնում եյին որերի յետելից։ Մոտենում եր հրաժեշտի ժամանակը։ Յերբ առյուծը բավականաչափ մտածեց պառային, իվան Պետրովիչը մտածեց վերադառնալ հայրենի քաղաքը։

Հրաժեշտի որն իվան Պետրովիչը սովորականից յերկար մնաց վանդակի առաջ։ Նայում եր առյուծի աչքերին և խղճահարվում, վոր շուտով նրան պիտի մենակ թողնի։

— Մնաս բարյավ, —ասաց նա, բռնելով առյուծի թաթը, մեղմ չոյելով։ Դնում եմ հայրենիք, քեզ թողնում եմ հավատարիմ ու բարի ընկեր Ստեփանին։

Ստեփան, արի՛ այստեղ, մոտեցի՛ր, վոր զգա, թե  
դու ել իմ և նրա բարեկամն ես, շոյի՛ր նրա թաթը:

Ծառան մի քիչ վախեցած՝ ձեռքը տարավ առյուծի  
թաթին: Առյուծը տեսնելով իվան Պետրովիչին հան-  
դիստ ու խաղաղ դրամթյան մեջ՝ հանդստացավ, թա-  
թը յետ չքաշեց: Մտեփանն ոկսեց նրան կերակրել:  
Առյուծը տարաված եր իր սննդով, յերբ իվան Պետրո-  
վիչն աննկատելի հեռացավ վանդակից և հաստատ  
քայլերով անմիջապես դուրս յեկավ պարտեզից:

\*\*\*

Մյուս որը, սովորական ժամին «Հոտերի ահարե-  
կիչը» մոտեցավ վանդակի ճաղերին: Բազմաթիվ  
հանդիսականների մեջ նա կարծես վորոնում եր այն  
աչքերը, վորոնք այնքան սիրալիր և բարի եյին նրա  
համար: Նա սովորել եր ամեն որ վորոշ ժամին մոտե-  
նալ ճաղերին, զգալ մեղմ ձեռքի շփումն իր թաթին.  
Վոչ վոք չեկավ, բացի ծառայից: Ծառան չեր կարող  
փոխարինել իվան Պետրովիչին: Իվան Պետրովիչը լավ  
եր հատկանում կենդանուն:

Առյուծը կորցրեց իր հանդիստ բնավորությունը:  
Զսպող ուժը չկար: Նա տեսնդային դրության մեջ եր:  
Ծառան լավ չգիտեր՝ ինչպես վարվեր նրա հետ. հան-  
դիսականները յերբեմն անհանդստացնում եյին: Իվան  
Պետրովիչի ժամանակ առյուծի հանդիստը վոչ վոք  
չեր խանդարում, ավելի լավ եյին խնամում, վան-  
դակը շուտ-շուտ մաքրում:

Առյուծը հաճախ քայլում եր արագ-արագ մեկ ան-  
կյունից մյուսը, մոտենում ճաղերին, գլուխը բարձ-  
րացնում, նայում ամբոխին ու ելի յետ դառնում,  
նորից անկյունից անկյուն անցնում, կամ ճաղերի  
ուղղությամբ՝ աջ ու ձախ քայլում:

Մի որ ել աննդին չմոտեցավ: Եերբ ծառան միսն  
առաջ բերեց, նա յետ քաշվեց ու մոնչաց:

Հանդիսականները դրդում եյին նրան, չեր կա-  
րողանում տանել նրանց ազմուկը: Զոյայնանում եր:  
Ավելի չաճախ անցնում եր վանդակի խորքը: Ծառան

նկատեց այդ վուխովությունը. մոտենում եր նրան  
յերկյուղով, գցում միսը ներս ու յետ գալիս:

Պարտեզի այցելուները շատ եյին սիրում առյու-  
ծին: Տեսնելով նրա այժմյան դրությունը՝ զարժա-  
նում եյին:

Առյուծը նիհարել, ջղայնացել եր:

— Ի՞նչ պատահեց նրան, — հարցրեց մեկը:

— Գուցե վա՞տ են կերակրում. այդպես ել անխըդ-  
ճություն, բերել գցել են հոտած վանդակի մեջ, բա-  
վական չե, դեռ սոված ել պահե՞լ.

— Իդուր եք վրդովվում, — ասաց յերբորդը, — չե՞ք  
տեսնում միսը, ընկած ե մոտը, իսկ նա չի մոտենում:

Մտածում եյին՝ մի գուցե մեկը վնասակար չան  
եր զցել նրա առաջ և նա դրանից հիվանդացել...  
Այդպես եր կարծում և պարտեզի ծառան...

Բայց վանդակի վրա գրված եր՝ «Կողմնակի մարդ-  
կանց խստիվ արգելվում ե առյուծին կերակրել»:  
Այդ խոսքերը բոլորին ել զայռում եյին:

Առյուծն որեցոր ավելի յեր ջղայնանում, կորց-  
րել եր վեհությունը, այլևս առաջվա պես հպարտ-  
հպարտ բաշազարդ գլուխը չեր բարձրացնում: Մեկ-  
մեկ տիրագին վոռնում եր, գալիս ճաղերին հովում,  
թաթերով դուրս գալու փորձեր անում, նորից ընկ-  
նում այս ու այն կողմ: Այնպիսի տպավորություն  
եր թողնում, կարծես թե նոր եք զգում, հասկանում,  
վոր ինքն ազատ չե...

— Չե՛, չի կարելի նրանց այսպիսի վանդակներում  
պահել, — ասում եյին այցելուները՝ առանց այն ել  
մեր կիման նրանց համար լավ չե, իսկ այս նեղ վան-  
դակի մեջ՝ ել ավելի վատ...

Իսկապես մեծ խնամք եր պետք, վոր արմագար-  
ծային յերկրներից բերած վայրի կենդանիները դիմա-  
նային: Լավ խնամք, հոգացողություն, հարմար  
սնունդ ու բնակարան՝ ահա ամենաառաջին և անհրա-  
ժեշտ պայմանները:

Առյուծի արտասովոր տրամադրությունը շտ-  
մերին եր գրավել: Ամեն որ ահագին ամբոխ եր

Հավաքվում նրա առաջ: Հազար ու մի մեղմ խռոքեր  
եյին ասում նրա հասցեյին: Վոմանք ել խղճահարփած,  
դժգոհությամբ հայնոյում եյին պարտեզի վարչու-  
թյան:

— Պիտի ազատել նրան, կամ լավ բժշկել, յեթե  
հիվանդ ե կամ ազատել, կամ ուղարկել հարավային  
քաղաքներից մեկը, մեր հյուսիսային կլիման վատ և  
աղղում նրա վրա:

Մեկ որ առյուծն ավելի գրավեց բոլորի ուշադրու-  
թյունը: Նա հիվանդի նման՝ գլուխը ցած գցած՝ չա-  
փում եր վանդակի պատերը ու մոնչում... Հանկարծ  
կանգ առավ վանդակի մեջտեղը, աչքերն ուղղեց ամ-  
բոխի վրա, ապա դլուխը ցնցեց, առաջ քաշեց ու յերա-  
խը լայն բաց անելով՝ մի այնպիսի անսովոր տևական  
վոռնոց բարձրացրեց, վոր ամբոխը բնազդմամբ յետ  
քաշվեց... Բավական եր, վոր մի քանի հոգի սար-  
սափած վագեյին... սկսվեց իրարանցում... Կանանց  
զիլ ձայներ, յերեխաների լաց ու ճիշ— այդ բոլորից  
պարտեզի այցելուները յերկուղի մեջ ընկած՝ փա-  
խուստի դիմեցին. Վոմանց թվաց, թե առյուծը դուրս  
եր յեկել վանդակից և հետապնդում եր մարդկանց...

Պարտեզում ընդհանուր իրարանցում ընկավ: Կա-  
նայք շտապեցին դուրս բերել այնտեղից լացող յերե-  
խաներին: Բոլոր ծառուղիներից ամբոխը վա-  
զում եր դեպի գլխավոր մուտքը...

«Առյուծը դուրս յեկավ վանդակից»— այս եր  
լովում չորս կողմից:

Առյուծը չեր դադարում մոնչալուց և անընդհատ  
վոռնալուց:

Անապատում՝ նրա ուժեղ վոռնոցն ազդում եր հո-  
տերի վրա, և ահ ու դողով բռնված կենդանիներն  
իրարանցման մեջ ընկնելով՝ ցիր ու ցան յեղած՝ խե-  
լակորույս այս ու այն կողմ եյին վաղում՝ առյուծի  
ճանկերից ազատվելու համար. նույնպես և այժմ...  
նրա վոռնոցը սարսափի մեջ գցեց մարդկային ամ-  
բոխը. մարդիկ ել խելակորույս վազում եյին, վազում,  
փախչում՝ կյանքի վրկության մասին մտածելով...

Պարտեզը զադարկվեց...

Առյուծը մնաց մենակ իր նեղ, հոտած վանդա-  
կում... գլուխը ցած գցած նայում եր ճաղերից  
գուրս... խեղդում եր նրան քաղաքի ողբը, գրգռում  
ամբոխի անսովոր աղմուկը, ճնշում եյին նրան վան-  
դակի նեղ պատերը...

Ազատություն. միակ վրկությանն ազատությունն  
եր...



ՀՀ Ազգային գրադարան



NL0392831

7724

248

ԳԻՒԸ 40 ԿՈԹ.



Р. ГАБРИЭЛЯН  
ГРОЗА ЖИВОТНЫХ

Гиз ССР Армении, Эреванъ